ՍԿԶԲՈՒՆՔ

# ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ

# ՎԵՐԼՈՒԾՈՒԹԵԱՆ

Ի ՊԷՏՍ ԴՊՐՈՑԱՑ

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՍՐԲԱԳՐԵԱԼ ԵՒ ՅԱՒԵԼԵԱԼ

Ա. Մ. Վ. Գ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ՄԻՒՀԷՆՏԻՍԵԱՆ

— 1868 —

40

491.99-5
Գ-34

ՍԿԶԲՈՒՆՔ

# ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ

# ՎԵՐԼՈՒԾՈՒԹԵԱՆ

Ի ՊԷՏՍ ԴՊՐՈՑԱՑ

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՍՐԲԱԳՐԵԱԼ ԵՒ ՅԱՒԵԼԵԱԼ

Ա. Մ. Վ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ՄԻՒՀԷՆՏԻՍԵԱՆ

—1868—

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Տ. Տ. Գ. ԳԷՈՐԳԱՅ ԿԱԹՈՒ-
ՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԵՒ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՑ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ
Տ. ԵՍԱՅԵԱՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՒ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՅ
Տ. ՊՕՂՈՍԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

A 1985

## ՄՇՏՆՋԵՆԱՒՈՐ ԲԱԺԱՆՈՐԴՔ

# ՀԱՅԿԱԶԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

### Ի ՅԻՇԱՏԱԿ ԱՆՄԱՀ ՀՈԳԻՈՑ

Արամեան որբոցի և Նաւոյի Յ. Խաչատուրեան.
Գաբրիէլի Երամեան.
Գայիանէ տիկնոջ Նորատունկեան.
Գրիգոր Պատուելւոյ Փէշտիմալճեան.
Երանուհի տիկնոջ Յ. Եէմէնիճեան.
Խորէնի Գէորգ Աղայեանց և Տիրուհի տիկնոջն.
Նիկողայոսի Մ. Զօրայեան:
Պաղտասար Պատուելւոյ.
Տ. Մխիթար Վարդապետի Աբբայ.
Տ. Տ. Յակոբ Պատրիարքի Նալեան.

Ալէքսան Յ. Խաչատուրեան.
Ահարոն Վարպետեան.
Անդրանիկ պէյ Կրճիկեան.
Անտոն Մալխասեան.
Բագրատ Բարսամեան.
Գառնիկ Յ. Յովակիմեան.
Գրիգոր Ա. Փափազեան.
Գրիգոր Խուրտաճեան.
Գրիգորիկ Կ. Պալեան.
Գրիգոր Ս. Բարսեղեան.
Գրիգոր Տ. Գէորգեան Աստափ.
Դանիէլ Մարկոսեան.
Տ. Տ. ԵՍԱՅԻ Արքեպիսկոպոսի և Պատրիարքի Ս. Երուսաղէմի.
Եսայի Մ. Անտոնեան.
Լեւոն Մ. Գափամաճեան:
Հայր Խաչատուր Սողոմեան:
Տ. Խորէն Վ. Գալֆայեան.
Կարապետ Սողայեան:
Ճանիկ Պէյլէրճեան:
Ճանիկ Ս. Արամեան.
Մարկոս Աղաճանեան:
Մարտիրոս Թագաթլեան.
Մկրտիչ Ճանպոլեան:
Մկրտիչ Պէնտէրեան:

Մկրտիչ Ստեփանեան.
Մկրտիչ Տամամեան.
Յակոբիկ Կ. Պալեան.
Յակոբ Ս. Փէրըշլեան.
Յ. Ոսկան.
Յարութիւն Մարգարեան.
Յովհաննէս Հալուեան.
Յովհաննէս Յ. Ամիրայեան.
Յովհաննէս Յակոբեան.
Յովհաննէս Պօյաճեանց.
Յովհաննէս Սարաթեան.
Յովսէփ Գափամաճեան.
Նիկողայոս Տ. Շմաւոնեան.
Նշան Հարենց.
Պօղոս Մէրամէճեան.
Տ. Պօղոս Վ. Խօլասեանց
մաւ.
Ռուբէն Յ. Քիւրքճեան.
Սարգիս Գալուստեան:
Սարգիս Մ. Գափամաճեան:
Սերովբէ Թագւորեան.
Սիմոն Սիմոնովիչ.
Ստեփան Ա. Ամիրայեան.
Տիգրան Մ. Գափամաճեան.

# ՀԱՄԱՌՕՏ ԾԱՂԿԱՔԱՂ

ՔԱՆԻ ՄԸ ԸՆՏԻՐ ՄԱՏԵՆԱԳԻՐՆԵՐԷ

ՀԱՆԴԵՐՁ ՎԵՐԼՈՒԾՈՒԹԵԱՄԲ

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՍՈՐՎՈՂՆԵՐՈՒՆ ԴԻՒՐՈՒԹԵԱՆԸ

ՀԱՄԱՐ

---

Աս համառօտ գրքին նպատակն է մեր նախնեաց ընտիր մատենագրութիւններէն քանի մը հատուածներ քաղելով համառօտ ծաղկաքաղ մ՚ընել, որ տղոց ընթերցանութեան դասագիրք ըլլալէ զատ՝ անոնց քերականական լուծման համար ալ ծառայէ ։ Աս նպատակով քերականական լուծման կանոններ ու լուծելու գործնական օրինակներ ալ ամէն մէկ մասին կամ հատուածին սկիզբը պիտի դնենք ։

## ԳԻՏԵԼԻՔ

1 . Խօսք մը բառերէ կը բաղկանայ . ուստի լուծում ընելը , կամ խօսք մը քերականօրէն լուծելը՝ խօսքը իր մասերուն բաժնել է ։

2. Լուծելու ատեն երկու բան կ'ը-նենք. Ա. Բառազննութիւն, և Բ. Վեր-լուծութիւն։

3. Բառազննութիւնը կրկին է.

Ա. Բառերուն բնութիւնը ցուցընել, այսինքն թէ խօսքին մէջ բառերն ինչ մասն բանի են, գոյակա՞ն թէ ածական, դերա-նո՞ւն թէ բայ, և այլն։

Բ. Բառերուն տեսակները և պատահ-մունքները ցուցընել, այսինքն՝ անոնց թիւը, հոլովը, դէմքը, եղանակը, ժամանակը, ևն։

## Ա. ՄԱՍՆ

### Ա. ԱՍՏԻՃԱՆ ԲԱՌԱԶՆՆՈՒԹԵԱՆ

Բառազննութեան առաջին աստիճանին մէջ տղաք խօսքին մէջ իւրաքանչիւր բառի բնութիւնը պիտի ցուցընեն, այսինքն թէ բառ մը գոյակա՞ն է թէ ածական կամ նա-խադրութիւն կամ բայ, վերջապէս պէտք է որ Տասն Բանի բառաձևերը յանուանէ ցուցընեն կամ յայտնեն։

#### ՕՐԻՆԱԿ

Եւ 'ի ծնանելն Յիսուսի 'ի Բեթղահէմ Հրէաս-տանի յաւուրս Հերովդի արքայի, ահա մոգք յա-րևելից եկին յԵրուսաղէմ, և ասեն. Ո՞ւր է որ ծնաւ արքայն Հրէից, զի տեսաք զաստղն նորա յարևելս, և եկաք երկիր պագանել նմա։

| | | | |
|---|---|---|---|
| Եւ | շաղ. | ասեն | բայ. |
| ’ի | նախ. | Ուր | մակ. |
| ծնանել | բայ. | է | բայ. |
| ն | դեր. | որ | դեր. |
| Յիսուսի | գոյ. | ծնաւ | բայ. |
| ’ի | նախ. | արքայ | գոյ. |
| Բեթղեհէմ | գոյ. | ն | դեր. |
| Հրէաստանի | գոյ. | Հրէից | գոյ. |
| յ | նախ. | զի | շաղ. |
| աւուրս | գոյ. | տեսաք | բայ. |
| Հերովդի | գոյ. | զ | նախ. |
| արքայի | գոյ. | աստղ | գոյ. |
| ահա | մակ. | ն | դեր. |
| մոգք | գոյ. | նորա | դեր. |
| յ | նախ. | յ | նախ. |
| արեւելից | գոյ. | արեւելս | գոյ. |
| եկին | բայ. | եւ | շաղ. |
| յ | նախ. | եկաք | բայ. |
| Երուսաղէմ | գոյ. | երկիր պագանել | բայ. |
| եւ | շաղ. | նմա | դեր. |

Եւ իբրեւ լուաւ արքայ Հերովդէս, խռովեցաւ, եւ ամենայն Երուսաղէմ ընդ նմա ։

| | | | |
|---|---|---|---|
| Եւ | շաղ. | եւ | շաղ. |
| իբրեւ | շաղ. | ամենայն | ած. |
| լուաւ | բայ. | Երուսաղէմ | գոյ. |
| արքայ | գոյ. | ընդ | նախ. |
| Հերովդէս | գոյ. | նմա | դեր. |
| խռովեցաւ | բայ. | | |

Եւ ժողովեալ զամենայն զքահանայապետս

եւ զդպիրս ժողովրդեանն հարցանէր 'ի նոցանէ թէ ուր ծնանիցի Քրիստոսն ։

| | | | |
|---|---|---|---|
| Եւ | շղ. | ժողովրդեան | գյ. |
| ժողովեալ | անց. դերբ. | ն | դէմ. |
| զ | նխ. | հարցանէր | բյ. |
| ամենայն | ած. | 'ի | նխ. |
| զ | նխ. | նոցանէ | դեր. |
| քահանայապետս | գյ. | թէ | շղ. |
| ն | դէմ. | ուր | մկ. |
| եւ | շղ. | ծնանիցի | բյ. |
| զ | նխ. | Քրիստոս | գյ. |
| դպիրս | գյ. | ն | դէմ. |

Եւ նոքա ասեն ցնա 'ի Բեթղահէմ Հրէաստանի ։ Յայնժամ Հերովդէս գաղտ կոչեաց զմոգսն, եւ ստուգեաց 'ի նոցանէ զժամանակ աստեղն երեւելոյ ։ Եւ արձակեալ զնոսա 'ի Բէթղահէմ, ասէ. Գնացէք ստուգեցէք վասն մանկանն, եւ յորժամ գտանիցէք՝ ազդ արասջիք ինձ, զի եւ ես եկեալ երկիր պագից նմա ։ Եւ նոքա իբրեւ լուան 'ի թագաւորէն՝ գնացին. եւ ահա աստղն զոր տեսին յարեւելս՝ առաջնորդեաց նոցա, մինչեւ եկեալ եկաց 'ի վերայ՝ ուր էր մանուկն ։ Իբրեւ տեսին զաստղն, խնդացին յոյժ ուրախութիւն մեծ ։ Եւ իբրեւ մտին 'ի տուն, տեսին զմանուկն հանդերձ Մարեմաւ մարբն իւրով, եւ անկեալ երկիր պագանէին նմա. եւ բացեալ զգանձս իւրեանց՝ մատուցին նմա պատարագս՝ ոսկի եւ կնդրուկ եւ զմուռս ։ Եւ հրաման առեալ 'ի տեսլեան չդառնալ անդրէն առ Հերովդէս, ընդ այլ ճանապարհ գնացին յաշ-

խարհն իւրեանց ։ Եւ իբրեւ գնացին նոքա անտի, ահա հրեշտակ Տեառն երեւէր ի տեսլեան Յովսեփու, եւ ասէր · Արի առ զմանուկն եւ զմայր իւր եւ փախիր յԵգիպտոս, եւ անդ լինիջիր՝ ցորժամ ասացից քեզ · քանզի ի խնդիր է Հերովդէս կորուսանել զմանուկն ։ Եւ նա յարուցեալ առ զմանուկն եւ զմայր իւր գիշերի՝ եւ գնաց յԵգիպտոս, եւ անդ էր մինչեւ ցվախճան Հերովդի ։

Յայնժամ իբրեւ ետես Հերովդէս թէ խաբեցաւ ի մոգուց անտի, բարկացաւ յոյժ · եւ առաքեաց կոտորեաց զամենայն մանկունս որ էին ի Բեթղահէմ եւ յամենայն սահմանս նորա՝ յերկեմենից եւ ի խոնարհ, ըստ ժամանակին զոր ստուգեաց ի մոգուցն ։ Եւ ի վախճանելն Հերովդի, ահա հրեշտակ Տեառն ի տեսլեան երեւէր Յովսեփայ յԵգիպտոս, եւ ասէր · Արի առ զմանուկն եւ զմայր իւր, եւ գնա յերկիրն Իսրայէլի · զի մեռան որ խնդրէին զանձն մանկանն ։ Եւ նա յարուցեալ առ զմանուկն եւ զմայր նորա, եւ եկն յերկիրն Իսրայէլի ։ Եւ իբրեւ լուաւ եթէ Արքեղայոս թագաւորեաց Հրէաստանի փոխանակ Հերովդի հօրն իւրոյ, երկեաւ երթալ անդր · եւ հրաման առեալ ի տեսլեան, գնաց ի կողմանս Գալիլեացւոց ։ Եւ եկեալ բնակեցաւ ի քաղաքին՝ որ կոչէր Նազարեթ ։

Դուք էք աղ երկրի · եթէ աղն անհամի՝ ի՞ւ յաղիցի · ոչ ինչ ազդիցէ այնուհետեւ, բայց եթէ ընկենուլ արտաքս՝ եւ կոխան լինել ի մարդկանէ ։ Դուք էք լոյս աշխարհի · ոչ կարէ քաղաք թաքչել՝ որ ի վերայ լերին կայցէ ։ Եւ ոչ լուցանեն ճրագ՝ եւ դնեն ընդ գրուանաւ, այլ ի վերայ

աշտանակի · եւ լոյս տայ ամենեցուն՝ որ ՚ի տանն իցեն ։ Այնպէս լուսաւորեսցէ լոյս ձեր առաջի մարդկան, որպէս զի տեսցեն զգործս ձեր բարիս, եւ փառաւորեսցեն զՀայր ձեր որ յերկինս է ։ Եթէ մատուցանիցես զպատարագ քո ՚ի վերայ սեղանոյ, եւ անդ յիշիցես՝ եթէ եղբայր քո ունիցի ինչ խէթ զքէն, թող զպատարագն քո առաջի սեղանոյն, եւ երթ նախ հաշտեաց ընդ եղբօր քում, եւ ապա եկեալ մատուսջիր զպատարագն քո ։ Լեր իրաւախոհ ընդ ոսոխի քում վաղվաղակի, մինչդեռ իցես ընդ նմա ՚ի ճանապարհի · գուցէ մատնիցէ զքեզ ոսոխն դատաւորի, եւ դատաւորն դահճի, եւ արկանիցիս ՚ի բանտ ։ Ամէն ասեմ քեզ · ոչ ելանիցես անտի, մինչեւ հատուցանիցես զյետին նաքարակիտն ։ Լուարուք զի ասացաւ առաջնոցն · Մի երդնուցուս սուտ, բայց հատուսցես տեառն զերդմունս քո ։ Այլ ես ասեմ ձեզ՝ ամենեւին մի երդնուլ · մի յերկինս՝ զի աթոռ է Աստուծոյ · եւ մի յերկիր՝ զի պատուանդան է ոտից նորա · եւ մի յԵրուսաղէմ՝ զի քաղաք է մեծի արքայի ։ Եւ մի ՚ի գլուխ քո երդնուցուս, զի ոչ կարես մազ մի սպիտակ առնել կամ թուխ ։ Այլ եղիցի ձեր բան, այոն՝ այո, եւ ոչն՝ ոչ · զի աւելին քան զայն ՚ի չարէն է ։ Լուարուք զի ասացաւ · Ակն ընդ ական, եւ ատամն ընդ ատաման ։ Այլ ես ասեմ ձեզ · Մի կալ հակառակ չարին ։ Այլ եթէ ոք ածիցէ ապտակ յաջ ծնօտ քո՝ դարձո նմա եւ զմիւսն ։ Եւ որ կամիցի ոք դատել եւ առնուլ զշապիկս քո՝ թող ՚ի նա եւ զբաճկոնն քո ։ Եւ որ տարապարհակ վարիցէ զքեզ մղոն մի, երթ ընդ նմա երկուս ։ Որում խնդրէ ՚ի քէն՝ տուր,

եւ որ կամիցի փոխ առնուլ 'ի քէն՝ մի դարձուցաներ զերեսս ։ Լուարուք այսպէս զի ասացաւ · Սիրեսցես զընկեր քո , եւ ատեսցես զթշնամին քու Այլ ես ասեմ ձեզ · Սիրեցէք զթշնամիս ձեր · օրհնեցէք զանիծիչս ձեր · բարի արարէք ատելեաց ձերոց , եւ աղօթս 'ի վերայ այնոցիկ՝ որ լլկեն զձեզ եւ հալածեն ։ Զի եղիջիք որդիք Հօր ձերոյ որ յերկինսն է · զի զարեգակն իւր ծագէ 'ի վերայ չարաց եւ բարեաց , եւ ածէ անձրեւ 'ի վերայ արդարոց եւ մեղաւորաց ։ Զի եթէ սիրիցէք զայնոսիկ որ սիրեն զձեզ՝ զի՞նչ վարձք իցեն · ո՞չ ապաքէն եւ մաքսաւորք զնոյն գործեն ։ Եւ եթէ տայցէք միայն ողջոյն բարեկամաց ձերոց՝ զի՞նչ աւելի առնէք · ո՞չ ապաքէն մաքսաւորք եւ մեղաւորք զնոյն գործեն ։

Եւ յորժամ պահիցէք՝ մի լինիք իբրեւ զկեղծաւորսն տրտմերեսք , որ այպականեն զերեսս իւրեանց , որպէս զի երեւեսցին մարդկան թէ պահեն ։ Այլ դու՝ յորժամ պահիցես , օծ զգլուխ քո՝ եւ լուա զերեսս քո , զի մի երեւեսցիս մարդկան իբրեւ զպահօղ , այլ Հօր քում 'ի ծածուկ · եւ Հայրն քո որ տեսանէ 'ի ծածուկ՝ հատուսցէ քեզ ։ Մի գանձէք ձեզ գանձս յերկրի , ուր ցեց եւ ուտիճ ապականեն , եւ ուր գողք ական հատանեն եւ գողանան ։ Այլ գանձեցէք ձեզ գանձս յերկինս , ուր ոչ ցեց եւ ոչ ուտիճ ապականեն , եւ ոչ գողք ական հատանեն եւ գողանան ։ Զի ուր գանձք ձեր են՝ անդ եւ սիրտք ձեր լիցին ։ Մի հոգայք վասն ոգւոց ձերոց թէ զինչ ուտիցէք՝ կամ զինչ ըմպիցէք · եւ մի վասն մարմնոց ձերոց՝

թէ զինչ աղանիցէք · ո՞չ ապաքէն ոգի առաւել է քան զկերակուր, եւ մարմին՝ քան զհանդերձ ։ Հայեցարուք 'ի թռչունս երկնից՝ զի ոչ վարեն եւ ոչ հնձեն եւ ոչ ժողովեն 'ի շտեմարանս · եւ Հայրն ձեր երկնաւոր կերակրէ զնոսա ։ Ո՞չ ապաքէն դուք առաւել էք քան զնոսա ։ Իսկ արդ՝ ո՞ 'ի ձէնջ առ հոգալ իւրում յաւելուլ կարիցէ 'ի հասակ իւր կանգուն մի ։

Եւ վասն հանդերձի զի՞ հոգայք · Հայեցարուք 'ի շուշանն վայրենի՝ ո՞րպէս աճէ · ոչ ջանայ, եւ ոչ նիւթէ ։ Ասեմ ձեզ՝ զի եւ ոչ Սողոմոն յամենայն 'ի փառսն իւրում զգեցաւ իբրեւ զմի 'ի նոցանէ ։ Իսկ եթէ զխոտն 'ի վայրի, որ այսօր է եւ 'ի վաղիւ 'ի հնոց արկանի, Աստուած այնպէս զգեցուցանէ, ո՞րչափ եւս առաւել զձեզ, թերահաւատք ։ Մի այսուհետեւ հոգայցէք եւ ասիցէք. Զինչ կերիցուք՝ կամ զինչ արբցուք՝ կամ զինչ զգեցցուք ։

Զի՞ տեսանես զշիւղ յական եղբօր քո, եւ 'ի քում ական զգերանդ ոչ նշմարես ։ Կամ զիա՞րդ ասես ցեղբայր քո · Թող հանից զշիւղ յականէ քումմէ · եւ ահաւասիկ 'ի քում ականդ գերան կայ ։ Կեղծաւոր՝ հան նախ զգերանդ յականէ քումմէ, եւ ապա հայեսջիր հանել զշիւղն յականէ եղբօր քո ։ Ո՞ իցէ 'ի ձէնջ մարդ՝ ցոր խնդրիցէ որդի իւր հաց, միթէ քա՞ր տայցէ նմա · եւ կամ խնդրիցէ ձուկն, միթէ օ՞ձ տայցէ նմա ։ Արդ՝ եթէ դուք որ չարքդ էք՝ գիտէք պարգեւս բարիս տալ որդւոց ձերոց, ո՞րչափ եւս առաւել Հայրն ձեր որ յերկինս է տացէ բարիս այնոցիկ որ խնդրեն զնա ։ Զամենայն զոր միանգամ կամիջիք թէ

արարոցեն ձեզ մարդիկ՝ այնպէս եւ դուք արարէք նոցա ։ զի այս իսկ են օրէնքն եւ մարգարէք ։ Մտէք ընդ նեղ դուռն ։ քանզի ընդարձակ է դուռնն եւ համարձակ, ճանապարհն որ տանի 'ի կորուստ, եւ բազումք են որ մտանեն ընդ նա ։ Քանզի անձուկ է դուռնն, եւ նեղ ճանապարհն որ տանի 'ի կեանս, եւ սակաւք են որ գտանեն ըզ նա ։ Ամենայն որ լսէ զբանս իմ զայսոսիկ եւ առնէ զսոսա, նմանեսցի առն իմաստնոյ, որ շինեաց զտուն իւր 'ի վերայ վիմի ։ Իջին անձրեւք եւ խաղացին գետք, շնչեցին հողմք եւ բախեցին զտունն, եւ ոչ կործանեցաւ, քանզի 'ի վերայ վիմի հաստատեալ էր ։ Եւ ամենայն որ լսէ զբանս իմ զայսոսիկ՝ եւ ոչ առնէ զսոսա, նմանեսցի առն յիմարի, որ շինեաց զտուն իւր 'ի վերայ աւազոյ ։ Իջին անձրեւք, յարեան գետք, շնչեցին հողմք, հարին զտունն եւ անկաւ, եւ էր կործանումն նորա մեծ յոյժ ։

Եւ իբրեւ եմուտ 'ի նաւն, գնացին զկնի նորա աշակերտքն նորա ։ Եւ ահա շարժումն մեծ եղեւ 'ի ծովուն՝ մինչ նաւին ծածկել յալեաց անտի, եւ ինքն ննջէր ։ Եւ մատուցեալ աշակերտքն յարուցին զնա եւ ասեն ։ Տէր՝ փրկեա զմեզ զի կորնչիմք ։ Եւ ասէ ցնոսա ։ Ընդէ՞ր վատասիրտք էք, թերահաւատք ։ Յայնժամ յարուցեալ սաստեաց հողմոցն եւ ծովուն, եւ եղեւ խաղաղութիւն մեծ ։ Եւ մարդիկն զարմացան՝ եւ ասէին ։ Որպիսի ոք իցէ սա, զի եւ հողմք եւ ծով հնազանդին սմա ։

Եւ իբրեւ անցին յայնկոյս յերկիրն Գերգեսացւոց, պատահեցին նմա դիւահարք երկու՝ ելեալք

'ի գերեզմանացն՝ չարաչարք յոյժ, որպէս զի չէր հնար անցանել ումեք ընդ այն ճանապարհ ։ Եւ ահա աղաղակեցին եւ ասեն . Զի՞ կայ մեր եւ քո, Յիսուս որդի Աստուծոյ, եկիր տարաժամ տանջել զմեզ ։ Եւ էր հեռագոյն 'ի նոցանէ երամակ մի խոզից արօտական ։ Եւ դեւքն աղաչէին զնա եւ ասէին . Եթէ հանես զմեզ աստի, հրաման տուր մեզ երթալ յերամակ խոզիցն ։ Եւ ասէ ցնոսա . Երթայք ։ Եւ նոքա ելեալ գնացին յերամակն խոզից ։ Եւ դիմեաց ամենայն երամակն 'ի դարէ անտի 'ի ծով, եւ մեռան 'ի ջուրսն ։

Եւ խոզարածքն փախեան, եւ երթեալ 'ի քաղաքն պատմեցին զամենայն, եւ զիրս դիւահարացըն ։ Եւ ահա ամենայն քաղաքն ել ընդ առաջ Յիսուսի ։ Իբրեւ տեսին զնա՝ աղաչեցին զի գնասցէ 'ի սահմանաց նոցա ։

Ոչ ինչ է 'ի ծածուկ՝ որ ոչ յայտնեսցի, եւ գաղտնի՝ որ ոչ ծանիցի ։ Զոր ասեմ ձեզ 'ի խաւարի՝ ասացէք 'ի լոյս . եւ զոր լուիցէք յունկանէ՝ քարոզեցէք 'ի վերայ տանեաց ։ Եւ մի երկնչիք յայնցանէ՝ որ սպանանեն զմարմին, եւ զոգի ոչ կարեն սպանանել ։ Այլ երկերուք դուք առաւել յայնմանէ՝ որ կարող է զոգի եւ զմարմին կորուսանել 'ի գեհենի ։ Ո՞չ ապաքէն երկու ճնճղուկք դահեկանի միոջ վաճառին, եւ մի 'ի նոցանէ յերկիր ոչ անկցի առանց Հօր ձերոյ ։ Այլ ձեր եւ ամենայն հեր գլխոյ թուեալ է ։ Եւ արդ՝ մի երկնչիցիք՝ զի լաւ էք քան զբազում ճնճղուկս ։

Յաւուր յայնմիկ ելեալ Յիսուս 'ի տանէն՝ նըս-

տէր առ ծովեզերն ։ Եւ ժողովեցան առ նա ժողովուրդք բազումք, մինչեւ մտանել նմա ՚ի նաւն եւ նստել ․ եւ ամենայն ժողովուրդն կայր առ ծովեզերբն ։ Եւ խօսէր ընդ նոսա բազում առակօք, եւ ասէր ․ Ահա ել սերմանահան սերմանել ․ եւ ՚ի սերմանելն իւրում՝ էր որ անկաւ առ ճանապարհաւ, եւ եկն թռչուն երկնից եւ եկեր զնա ։ Եւ այլն անկաւ յապառաժի, ուր ոչ գոյր հող բազում, եւ վաղվաղակի բուսաւ ․ առ ՚ի չգոյէ հիւթոյ երկրին՝ ՚ի ծագել արեւուն տապացաւ ․ եւ զի ոչ գոյին արմատք՝ չորացաւ ։ Եւ այլն անկաւ ՚ի մէջ փշոց, եւ ելին փուշքն եւ հեղձուցին զնա ։ Եւ այլն անկաւ յերկիր բարի, եւ տայր պտուղ ․ էր՝ որ հարիւրաւոր, եւ էր՝ որ վաթսնաւոր, եւ էր՝ որ երեսնաւոր ։

Այլ առակ արկ առ նոսա եւ ասէ ․ Նմանեցաւ արքայութիւն երկնից առն՝ որ սերմանիցէ սերմն բարի յագարակի իւրում ։ Եւ ՚ի քուն լինել մարդկանն եկն թշնամի նորա, եւ ցանեաց ՚ի վերայ որոմն ՚ի մէջ ցորենոյն՝ եւ գնաց ։ Եւ իբրեւ բուսաւ խոտն եւ արար պտուղ, ապա երեւեցաւ եւ որոմնն ։ Մատուցեալ ծառայք տանուտեառնն ասեն ցնա ․ Տէր, ո՞չ սերմն բարի սերմանեցեր յագարակին քում, արդ՝ ուստի՞ ունիցի զորոմն ։ Եւ նա ասէ ցնոսա ․ Այր թշնամի արար զայն ։ Ասեն ցնա ծառայքն ․ Կամի՞ս զի երթիցուք քաղեսցուք զայն ՚ի բաց ։ Եւ նա ասէ ցնոսա ․ Մի՛ ․ գուցէ մինչ քաղիցէք զորոմնն, եւ զցորեանն ընդ նմին ՚ի բաց խլիցէք ։ Թոյլ տուք երկոցունց աճել ՚ի միասին մինչեւ ՚ի հունձս ․ եւ ՚ի ժամանակի հնձոց

ասացից ցհնձողսն․ Քաղեցէք նախ զորոմն, եւ կապեցէք զայդ 'ի խրձունս առ 'ի յայրել․ եւ զցորեանն ժողովեցէք 'ի շտեմարանս իմ։

Յայնմ ժամանակի լուաւ Հերովդէս չորրորդապետն զլուր Յիսուսի։ Եւ ասէ ցծառայս իւր․ Նա է Յովհաննէս մկրտիչ, նա յարեաւ 'ի մեռելոց, եւ վասն այնորիկ զօրութիւնք լինին նովաւ։ Քանզի Հերովդէս կալաւ զՅովհաննէս, կապեաց զնա եւ եդ 'ի բանտի՝ վասն Հերովդիայ կնոջ Փիլիպպոսի եղբօր նորա։ Զի ասէր ցնա Յովհաննէս․ Ոչ արժան քեզ ունել զդա։ Եւ կամէր զնա սպանանել, բայց երկնչէր 'ի ժողովրդենէ անտի․ քանզի իբրեւ զմարգարէ ունէին զնա։ Եւ իբրեւ եղեն ծնունդք Հերովդի, կաքաւեաց դուստր Հերովդիայ 'ի մէջ բազմականին, եւ հաճոյ թուեցաւ Հերովդի․ ուստի եւ երդմամբ խոստացաւ տալ նմա զինչ եւ խնդրեսցէ։ Եւ նա յառաջագոյն խրատեալ 'ի մօրէ իւրմէ, Տուր ինձ, ասէ, այսր՝ 'ի վերայ սկտեղ զգլուխն Յովհաննու մկրտչի։ Եւ տրտմեցաւ թագաւորն․ բայց վասն երդմանցն եւ բազմականացն՝ հրամայեաց տալ նմա։ Եւ առաքեաց գլխատեաց զՅովհաննէս 'ի բանտի։ Եւ բերաւ գլուխն նորա սկտեղբ՝ եւ ետուն աղջկանն, եւ տարաւ առ մայր իւր։ Եւ մատուցեալ աշակերտքն նորա, բարձին զմարմինն եւ թաղեցին, եւ եկեալ պատմեցին Յիսուսի։

Նմանեցաւ արքայութիւն երկնից առն թագաւորի, որ կամեցաւ համար առնել 'ի մէջ ծառայից իւրոց։ Եւ իբրեւ սկսաւ առնել, մատու-

ցաւ ետ նա պարտապան մի բիւր քանքարաց ։ Իբ-րեւ ոչ ունէր հատուցանել , հրամայեաց զնա վաճառել տէր նորա , եւ զկին նորա եւ զորդիս , եւ զամենայն որ զինչ եւ ունիցի եւ հատուցանել ։ Եւ անկեալ ծառայն երկիր պագանէր նմա եւ ասէր ։ Երկայնամիտ լեր առ իս , եւ զամենայն հատուցից քեզ ։ Գթացեալ տէր ծառային այնորիկ՝ արձակեաց զնա , եւ զփոխն եթող նմա ։ Եւ ելեալ ծառայն՝ եգիտ զմի 'ի ծառայակցաց իւրոց որ պարտէր նմա հարիւր դահեկան ։ եւ կալեալ զնա՝ խեղդէր եւ ասէր ։ Հատո ինձ զոր պարտիսդ ։ Արդ՝ անկեալ ծառայակիցն առ ոտս նորա՝ աղաչէր զնա եւ ասէր ։ Երկայնամիտ լեր առ իս եւ հատուցից քեզ ։ Եւ նա ոչ կամէր ։ այլ չոգաւ արկ զնա 'ի բանտ՝ մինչեւ հատուսցէ զպարտսն ։ Իբրեւ տեսին ծառայակիցքն նորա զոր ինչ եղեւն՝ տրտմեցան յոյժ , եւ եկեալ ցուցին տեառն իւրեանց զամենայն որ ինչ եղեւն ։ Յայնժամ կոչեաց զնա տէրն իւր՝ եւ ասէ ։ Ծառայ չար , զամենայն զպարտսն թողի քեզ , վասն զի աղաչեցեր զիս ։ Ոչ արդ՝ ո՞չ էր պարտ եւ քեզ ողորմել ծառայակցին քում , որպէս եւ ես քեզ ողորմեցայ ։ Եւ բարկացեալ տէրն նորա՝ մատնեաց զնա դահճաց , մինչեւ հատուսցէ զամենայն զպարտսն ։

Քանզի նման է արքայութիւն երկնից առն տանուտեառն , որ ել ընդ առաւօտս 'ի վարձու առնել մշակս յայգի իւր ։ Եւ արկ վարձս մշակացն առուրն դահեկան , եւ առաքեաց զնոսա յայգի իւր ։ Եւ ելեալ զերրորդ ժամու՝ ետես այլս զի կային դատարկք 'ի հրապարակս ։ ասէ եւ ցնոսա ։

Երթայք եւ՛ դուք յայգի իմ, եւ զոր ինչ արժան իցէ՛ տաց ձեզ ։ Գնացին եւ նոքա ։ Եւ դարձեալ՛ ելեալ զվեց ժամու, եւ զինն ժամու՛ արար նոյնպէս ։ Եւ զմետասանեերորդ ժամու ելեալ, եգիտ այլս՛ զի կային դատարկք, ասէ ցնոսա · Ընդէ՞ր կայք աստ զօրս ցերեկ դատարկք ։ Ասեն ցնա · Զի ոչ ոք կալաւ զմեզ 'ի վարձու ։ Ասէ ցնոսա · Երթայք եւ դուք յայգին, եւ որ ինչ արժան է՛ առնուցուք ։ Եւ իբրեւ երեկոյ եղեւ՛ ասէ տէր այգւոյն ցգործակալս իւր · Կոչեա զմշակսն եւ տուր նոցա վարձս, սկսեալ 'ի յետնոցն մինչեւ ցառաջինսն ։ Իբրեւ եկին որք զմետասանեերորդ ժամուն, եւ առին մի՛ն մի դահեկան, եկեալ եւ առաջինքն՛ համարէին թէ աւելի առնուցուն. եւ առին մի՛ն մի դահեկան եւ նոքա ։ Իբրեւ առին՛ տրտնջէին ըզ տանուտեառնէն, եւ ասէին թէ՛ Դոքա յետինքդ մի ժամ գործեցին, եւ հաւասարակի՞րդ մեզ արարեր զդոսա, որ զծանրութիւն աւուրն բարձաք եւ ըզ տօթ ։ Նա պատասխանի ետ միում 'ի նոցանէ՛ եւ ասէ · Ընկեր, չզրկեմ զքեզ · ո՞չ դահեկանի միոջ սակ արկեր ընդ իս ։ Առ զքոյդ եւ երթ · Եթէ կամիմ յետնոյս տալ որպէս քեզ, միթէ չիցէ՞ ինձ իշխանութիւն յիմս առնել զինչ եւ կամիմ · կամ թէ ակն քո չա՞ր է, զի ես առատ եմ ։

Նմանեցաւ Թագաւորութիւն երկնից՛ առն թագաւորի, որ արար հարսանիս որդւոյ իւրում ։ Եւ առաքեաց զծառայս իւր կոչել զհրաւիրեալսն 'ի հարսանիս · եւ ոչ կամէին գալ ։ Դարձեալ առաքեաց այլ ծառայս, եւ ասէ · Ասացէք հրաւիրելոցն · Ահաւասիկ զճաշ իմ պատրաստեցի, զուա-

րանք իմ պարարանք զենեալ են, եւ ամենայն ինչ պատրաստ է, եկայք 'ի հարսանիսն ։ Եւ նոքա յուլացեալ՝ գնացին ոմն յագարակ իւր, եւ ոմն 'ի վաճառ իւր ։ Եւ այլք կալան զծառայս նորա, թըշնամանեցին եւ սպանին ։ Իսկ թագաւորն իբրեւ լուաւ՝ բարկացաւ, եւ առաքեաց զզօրս իւր եւ սատակեաց զսպանողսն զայնոսիկ, եւ զքաղաքն նոցա այրեաց ։ Յայնժամ ասէ ցծառայս իւր ։ Հարսանիքս պատրաստ են, եւ հրաւիրեալքն չէին արժանի ։ Արդ՝ երթայք յանցս ճանապարհաց, եւ զորս միանգամ գտանիցէք՝ կոչեցէք 'ի հարսանիսն ։ Եւ ելեալ ծառայքն 'ի ճանապարհս՝ ժողովեցին զամենեսեան զորս եւ գտին՝ զչարս եւ զբարիս, եւ լցան հարսանիքն բազմականօք ։ Եւ մտեալ թագաւորն հայել զբազմականօքն՝ ետես անդ այր մի որ ոչ էր զգեցեալ հանդերձ հարսանեաց ։ Եւ ասէ ցնա ։ Ընկեր, զիա՞րդ մտեր այսր, զի ոչ ունէիր հանդերձ հարսանեաց ։ եւ նա պապանձեցաւ ։ Յայնժամ ասէ թագաւորն ցպաշտաւորսն ։ Կապեցէք զդորա զոտս եւ զձեռս՝ եւ հանէք զդա 'ի խաւարն արտաքին, անդ եղիցի լալ եւ կրճել ատամանց ։ Զի բազումք են կոչեցեալք՝ եւ սակաւք ընտրեալք ։

Յայնժամ նմանեցի արքայութիւն երկնից տասն կուսանաց, որոց առեալ զլապտերս իւրեանց՝ ելին ընդ առաջ փեսային եւ հարսին ։ Հինգըն 'ի նոցանէ յիմարք էին՝ եւ հինգն իմաստունք ։ Յիմարքն առին զլապտերսն, եւ ձէթ ընդ իւրեանըս ոչ բարձին ։ Իսկ իմաստունքն առին եւ ձէթ ամանօք ընդ լապտերս իւրեանց ։ Եւ 'ի յամել

փեսային՝ ներհեցին ամենեքեան եւ 'ի քուն մտին Եւ 'ի մէջ գիշերի եղեւ բարբառ . Ահա փեսայ գայ , ելէք ընդ առաջ նորա : Յայնժամ յարեան ամենայն կուսանքն , եւ կազմեցին զլապտերս իւրեանց : Ասեն յիմարքն զիմաստունսն . Տուք մեզ յիւղոյդ ձերմէ , զի ահա շիջանին լապտերք մեր : Պատասխանի ետուն իմաստունքն եւ ասեն Գուցէ ոչ իցէ մեզ եւ ձեզ բաւական , այլ երթայք 'ի վաճառականս՝ եւ գնեսջիք ձեզ : Երթեւ նոքա գնացին գնել , եկն փեսայն , եւ պատրաստքն ընդ նմա մտին 'ի հարսանիսն եւ փակեցաւ դուռնն : Յետոյ գան եւ այլ կուսանքն՝ եւ ասեն . Տէր , տէր , բաց մեզ : Նա պատասխանի ետ եւ ասէ . Ամէն ասեմ ձեզ , թէ ոչ գիտեմ զձեզ :

Եւ ասէ . Առն միոջ էին երկու որդիք . ասէ կրտսերն 'ի նոցանէ ցհայրն . Հայր՝ տուր ինձ բաժին որ անկանի յընչիցդ : Եւ նա բաժանեաց նոցա զկեանսն : Եւ յետ ոչ բազում աւուրց ժողովեալ զամենայն կրտսերոյն՝ գնաց յաշխարհ հեռի , եւ անդ վատնեաց զինչս իւր , զի կեայր անառակութեամբ : Եւ իբրեւ սպառեաց զամենայն , եղեւ սով սաստիկ յաշխարհին յայնմիկ , եւ սկսաւ ինքն չքաւորել : Եւ գնացեալ յարեցաւ 'ի մի ումեմն 'ի քաղաքացւոց աշխարհին այնորիկ , եւ յղեաց զնա յագարակ իւր արածել խոզս : Եւ ցանկայր լնուլ զորովայն իւր յեղջերէն զոր խոզքն ուտէին, եւ ոչ ոք տայր նմա : Եւ եկեալ 'ի միտս իւր՝ ասէ . Քանի՛ վարձկանք իցեն 'ի տան հօր իմոյ հացալիցք , եւ ես աստ սովամահ կորնչիմ : Յարուցեալ գնացից առ հայր իմ , եւ ասացից ցնա .

Հայր, մեղայ յերկինս եւ առաջի քո, եւ ոչ եւս եմ արժանի կոչել որդի քո. արա զիս իբրեւ զմի 'ի վարձկանաց քոց: Եւ յարուցեալ եկն առ հայր իւր: Եւ մինչդեռ հեռագոյն էր, ետես զնա հայրն եւ գթացաւ. յարեաւ եւ ընթացաւ ընդ առաջ, անկաւ զպարանոցաւ նորա, եւ համբուրեաց զնա: Եւ ասէ ցնա որդին. Հայր, մեղայ յերկինս եւ առաջի քո, եւ ոչ եւս եմ արժանի կոչել որդի քո: Ասէ հայրն ցծառայս իւր. Վաղվաղակի հանէք զպատմուճանն առաջին, եւ ագուցէք նմա, եւ տուք զմատանին 'ի ձեռս նորա, եւ կօշիկս յոտս նորա, եւ ածէք զեզն պարարակ, զենէք, կերիցուք եւ ուրախ լիցուք. զի այս որդի իմ մեռեալ էր՝ եւ եկեաց, կորուսեալ էր՝ եւ գտաւ. եւ սկսան ուրախ լինել: Եւ էր երէց որդի նորա յագարակի. եւ մինչդեռ գայր եւ մերձ եղեւ 'ի տունն, լուաւ զձայն երգոց եւ զպարուց. եւ կոչեցեալ առ ինքն զմի 'ի ծառայիցն՝ հարցանէր թէ զի՞նչ իցէ այն: Եւ նա ասէ ցնա. Զի եղբայր քո եկեալ է, եւ եզեն հայր քո զեզն պարարակ, զի ողջամբ ընկալաւ զնա: Բարկացաւ եւ ոչ կամէր մտանել: Եւ հայրն ելեալ արտաքս՝ աղաչէր զնա: Պատասխանի ետ՝ եւ ասէ ցհայրն. Այսքանի ամք են զի ծառայեմ քեզ, եւ երբէք զպատուիրանաւ քով ոչ անցի. ուլ մի երբէք ոչ ետուր ինձ զի ուրախ եղէց ընդ բարեկամս իմ. յորժամ եկն որդիդ քո այդ որ եկեր զկեանս քո ընդ պոռնիկս՝ զեներ դմա զեզն պարարակ: Եւ ասէ ցնա. Որդեակ, դու հանապազ ընդ իս ես. եւ ամենայն որ ինչ իմ է՝ քո է. այլ ուրախ լինել եւ խնդալ պարտ էր, զի եղբայր քո այս մեռեալ

էր, եւ եկեաց. կորուսեալ էր, եւ գտաւ.

## Բ. ՄԱՍՆ

### Բ. ԱՍՏԻՃԱՆ ԲԱՌԱՔՆՆՈՒԹԵԱՆ

Բառաքննութեան երկրորդ աստիճանին մէջ տղայք, ամէն առաջ ըրածնուն պէս, իւրաքանչիւր բառի բնութիւնը կամ ինչ մասն բանի ըլլալն յայտնելէ զատ, բառին պատահմունքներն ալ պիտի յայտնեն.

Պատահմունք ըսելով կ'իմացուի

1. Բառին տեսակը: Զոր օրինակ. եթէ բառը գոյական է, պէտք է իմացնել թէ ինչ տեսակ գոյական է, յատուկ թէ հասարակ. եթէ ածական է, նոյնպէս պէտք է իմացնել թէ ո՛ր տեսակն է, որակակա՛ն, այսինքն՝ որպիսութիւն ցուցունող թէ թուական կամ ցուցական կամ ստացական կամ անորոշ, եւ որ բառին կը վերաբերի: Եթէ բառը դերանուն է, նոյնպէս տեսակ ունի. այսինքն՝ էական կամ անձնական, ցուցական, ստացական, եւ յարաբերական: Եթէ դերբայ է, նոյնպէս տեսակ ունի, այսինքն՝ անորոշ դերբայ, անցեալ դերբայ եւ ապառնի դերբայ:

Եթէ բառը բայ է, ան ալ տեսակներ ունի. էական կամ գոյական բայ, եւ ածական բայ. ասոր վերջինն ալ կրնայ ըլլալ ներգործական կամ կրաւորական եւ չէզոք:

Պատահմունք ըսելով կ'իմացուին

2. Բառին կրած փոփոխութիւնները: Օր օրինակ. գոյականին կրած փոփոխութիւններն են՝ թիւը և հոլովը: Ածականին փոփոխութիւններն ալ նոյն են՝ թիւ և հոլով: Դերանուան փոփոխութիւններն են՝ թիւէ և հոլովէ զատ, նաև դէմքի տարբերութիւնը, այսինքն՝ առաջին, երկրորդ և երրորդ դէմքի դերանուն: Դերբայը թիւէ և հոլովէ զատ՝ ունի նաև ժամանակ, այսինքն՝ անցեալ և ապառնի դերբայ: Բային փոփոխութիւններն են՝ եղանակը, ժամանակը, թիւը, դէմքը և լծորդութիւնը:

Նախադրութիւնը, մակբայը, շաղկապն ու ձայնարկութիւնը ոչ տեսակ ունին և ոչ ուրիշ փոփոխութիւն մը. ուստի լուծման մէջ բաւական է ըսել թէ այս ինչ բառը նախադրութիւն է կամ մակբայ կամ շաղկապ կամ ձայնարկութիւն.

Ծանօթ. 1 Պէտք է գիտնալ որ երբեմն բառ մը խօսքի մէջ իր բնութենէն տարբեր բնութեամբ առնուած է, զոր օրինակ՝ գոյական մը՝ ածականաբար, կամ ածական մը՝ գոյականաբար կամ մակբայօրէն, կամ ներգործական բայ մը՝ չէզոքաբար: Տղաք աս պարագան լուծման մէջ յայտնելու են:

Ծանօթ. 2. Պէտք է գիտնալ երկրորդ որ դերանունները միշտ ուրիշ անունի կամ

*գաղափարի մը տեղ կը դրուին . ուստի լուծման մէջ տալը պէտք է որ գերանուան մը համար այս նիշ տեսակ գերանուն է , և այս նիշ թիւ , հոլով և դէմք է ըսելէն ետքը՝ իմացունելն նաև որ բառին տեղ դրուած ըլլալը , ըսելով . Այս նիշ բառին տեղ դրուած է ։ Նոյնպէս յարաբերական գերանուան բոլոր պատահմունքներն ըսելէն ետքը՝ իմացունելու են նաև թէ որ բառն է յարաբերեալը , ըսելով . Այս նիշ բառը կը յարաբերէ , կամ՝ Այս նիշ բառը յարաբերեալն է ։*

### ՕՐԻՆԱԿ

*Յայնմ ժամանակի լուաւ Հերովդէս չորրորդապետն զլուր Յիսուսի , եւ ասէ ցծառայս իւր . Նա է Յովհաննէս Մկրտիչ , նա յարեաւ ՚ի մեռելոց , եւ վասն այնորիկ զօրութիւնք լինին նովաւ ։*

| | |
|---|---|
| Յ | [illegible] |
| *այնմ* | [illegible] *ժամանակ* [illegible] |
| *ժամանակի* | [illegible] |
| *լուաւ* | [illegible] *լսեմ* [illegible] |
| *Հերովդէս* | [illegible] |
| *չորրորդապետն* | [illegible] |
| *զ* | [illegible] |
| *լուր* | [illegible] |

| | |
|---|---|
| Յիսուսի | [illegible] |
| եւ | [illegible] |
| ասէ | [illegible] |
| | [illegible] ասեմ |
| | [illegible] |
| | [illegible] |
| ց | [illegible] |
| ծառայս | [illegible] ծառայ [illegible] |
| իւր | [illegible] |
| Նա | [illegible] |
| | Յիսուս [illegible] |
| է | [illegible] |
| | [illegible] եմ [illegible] |
| Յովհաննէս | [illegible] |
| Մկրտիչ | [illegible] |
| Նա | [illegible] |
| | Յովհաննէսին [illegible] |
| յարեաւ | [illegible] |
| | [illegible] յառնեմ |
| | [illegible] |
| ՚ի | [illegible] |
| մեռելոց | մեռեալ [illegible] |
| | մեռանիմ [illegible] |
| | [illegible] |
| եւ | [illegible] |
| վասն | [illegible] |
| այնորիկ | [illegible] |
| | [illegible] |
| զօրութիւնք | [illegible] |
| լինին | [illegible] |
| | [illegible] լինիմ [illegible] |

| | |
|---|---|
| նոյա | [illegible] Յովհաննէս [illegible] |

Քանզի Հերովդէս կալաւ զՅովհաննէս, կապեաց զնա եւ եդ 'ի բանտի վասն Հերովդիայ կնոջ Փիլիպպոսի եղբօր նորա. զի ասէր ցնա Յովհաննէս. Ոչ արժան քեզ ունել զդա։ Եւ (Հերովդէս) կամէր զնա սպանանել, բայց երկնչէր 'ի ժողովրդենէ անտի, քանզի իբրեւ զմարգարէ ունէին զնա։

| | |
|---|---|
| Քանզի | [illegible] |
| Հերովդէս | [illegible] |
| կալաւ | [illegible] ունիմ [illegible] |
| զ | [illegible] |
| զՅովհաննէս | [illegible] |
| կապեաց | [illegible] կապեմ [illegible] |
| զ | [illegible] |
| զնա | [illegible] Յովհաննէս [illegible] |
| եւ | [illegible] |
| եդ | [illegible] դնեմ [illegible] |
| 'ի | [illegible] |
| բանտի | [illegible] բանտ [illegible] |
| վասն | [illegible] |

| | |
|---|---|
| *Հերովդիայ* | [illegible] *Հերովդիա* [illegible] |
| *կնոջ* | [illegible] *կին* [illegible] |
| *Փիլիպպոսի* | [illegible] *Փիլիպպոս* [illegible] |
| *եղբօր* | [illegible] *եղբայր* [illegible] |
| *նորա* | [illegible] *Նա* [illegible] *Հերովդէս* [illegible] |
| *զի* | [illegible] |
| *ասէր* | [illegible] *ասել* [illegible] |
| *ց* | [illegible] |
| *նա* | [illegible] *Հերովդէս* [illegible] |
| *Յովհաննէս* | [illegible] |
| *չ* | [illegible] |
| *է* | [illegible] *եմ* [illegible] |
| *արժան* | [illegible] |
| *ունել* | [illegible] *ունիլ* [illegible] |
| *զ* | [illegible] |
| *դա* | [illegible] *Հերովդիա* [illegible] |
| *եւ* | [illegible] |
| *(Հերովդէս)* | [illegible] |
| *կամէր* | [illegible] *կամիլ* [illegible] |

| | |
|---|---|
| Դ | [illegible] |
| ձեռ | [illegible] |
| | Յաղթանակս [illegible] |
| ապաստանել | [illegible] |
| | [illegible] ապաստանեմ [illegible] |
| բայց | [illegible] |
| երկնչէր | [illegible] |
| | [illegible] երկնչիմ |
| | [illegible] |
| 'ի | [illegible] |
| 'ի ժողովրդենէ | [illegible] ժողո- |
| | վուրդ [illegible] |
| անտի | [illegible] |
| քանզի | [illegible] |
| իբրեւ | [illegible] |
| Դ | [illegible] |
| ըմբռնարէ | [illegible] |
| ունէին | [illegible] |
| | [illegible] ունիմ |
| | [illegible] |
| Դ | [illegible] |
| ձեռ | [illegible] |
| | Յաղթանակս [illegible] |

Յայնժամ իբրեւ եւես Հերովդէս թէ խաբեցաւ 'ի մոգուց անտի, բարկացաւ յոյժ, եւ առաքեաց կոտորեաց զամենայն մանկունսն որ էին 'ի Բեթղեհէմ եւ յամենայն սահմանս նորա, յերկեմնից եւ 'ի խոնարհ, ըստ ժամանակին զոր ստուգեաց 'ի մոգուցն ։

| | |
|---|---|
| Յայնժամ | [illegible] |

| | |
|---|---|
| *իբրեւ* | [illegible] |
| *ետես* | [illegible] *տեսանեմ* [illegible] |
| *Հերովդէս* | [illegible] |
| *թէ* | [illegible] |
| *խաբեցաւ* | [illegible] *խաբեմ* [illegible] |
| *՚ի* | [illegible] |
| *՚ի մոգուց* | [illegible] *մոգ* [illegible] |
| *անտի* | [illegible] |
| *բարկացաւ* | [illegible] *բարկանամ* [illegible] |
| *յոյժ* | [illegible] |
| *եւ* | [illegible] |
| *առաքեաց* | [illegible] *առաքեմ* [illegible] |
| *կոտորեաց* | [illegible] *կոտորեմ* [illegible] |
| *զ* | [illegible] |
| *ամենայն* | [illegible] *մանկունք* [illegible] |
| *մանկունս* | [illegible] *մանուկ* [illegible] |
| *որ* | [illegible] *մանկունք* |
| *էին* | [illegible] *եմ* [illegible] |
| *՚ի* | [illegible] |
| *Բեթղեհէմ* | [illegible] |
| *եւ* | [illegible] |
| *յ* | [illegible] |

| | |
|---|---|
| *ամենայն* | [illegible] *սահման* բառին ։ |
| *սահմանս* | [illegible] *սահման* բառին ։ |
| *նորա* | [illegible] *բեթղեհէմ* բառին [illegible] ։ |
| *յ* | Նախդիր ։ |
| *երկեմնից* | [illegible] *երկեմեան* բառին ։ |
| *եւ* | [illegible] ։ |
| *'ի* | Նախդիր ։ |
| *խոնարհ* | [illegible] ։ |
| *ըստ* | Նախդրութիւն ։ |
| *ժամանակի* | [illegible] *ժամանակ* բառին ։ |
| *ն* | դիմորոշ յօդ ։ |
| *զ* | Նախդիր ։ |
| *որ* | [illegible] *ժամանակ* ։ |
| *ստուգեաց* | [illegible] *ստուգեմ* բային ։ |
| *'ի* | Նախդիր ։ |
| *'ի մոգուց* | [illegible] *մոգ* բառին ։ |
| *ն* | դիմորոշ յօդ ։ |

Ընդ ժամանակին ընդ այնոսիկ արկ Հերովդէս արքայ ձեռն չարչարել զոմանս յեկեղեցւոյն ։ Եւ սպան զՅակովբոս զեղբայրն Յովհաննու սրով ։ Եւ տեսեալ թէ հաճոյ է Հրէից, յաւել եւս ունել զՊետ-

րոս · եւ էին աւուրք բաղարջակերաց ։ Զոր իբրեւ կալաւ , եդ 'ի բանտի , եւ մատնեաց չորից չորրորդաց զինուորաց պահել զնա , եւ կամէր յետ զատկին ածել զնա ժողովրդեանն ։ Եւ Պետրոս 'ի պահեստի էր 'ի բանտին , եւ աղօթք ստէպ լինէին յեկեղեցւոյն վասն նորա առ Աստուած ։ Իբրեւ կամեցաւ զնա ածել Հերովդէս , 'ի գիշերին յայնմիկ էր Պետրոս 'ի քուն 'ի մէջ երկուց զինուորաց՝ կապեալ կրկին շղթայիւք , եւ պահապանքն առաջի դրանն պահէին զբանտն ։ Եւ ահա հրեշտակ տեառն եկն եկաց 'ի վերայ , եւ լոյս ծագեաց 'ի տանն , եւ խթեաց զկողն Պետրոսի , յարոյց զնա եւ ասէ · Արի՛ վաղվաղակի ։ Եւ անկան շղթայքն 'ի ձեռաց նորա ։ Եւ ասէ ցնա հրեշտակն · Ած ըզ գօտի քո , եւ արկ զհողաթափս յոտս քո ։ Եւ արար այնպէս ։ Եւ ասէ ցնա · Արկ զձորձս քո եւ եկ զկնի իմ ։ Եւ ելեալ երթայր զհետ , եւ ոչ գիտէր եթէ ճշմարիտ իցէ որ ինչ եղեւն 'ի հրեշտակէն , զի համարէր երազ տեսանել ։

Եւ իբրեւ անցին նոքա ըստ մի պահ եւ ըստ երկուս , եկին մինչեւ 'ի դուռն երկաթի որ հանէր 'ի քաղաքն , եւ որ ինքնին բացաւ նոցա ։ Եւ ելեալ անցին ընդ փողոց մի , եւ վաղվաղակի 'ի բաց եկաց 'ի նմանէ հրեշտակն ։ Եւ Պետրոս իբրեւ 'ի միտս եղեւ , ասէ · Արդ գիտեմ ճշմարիտ եթէ առաքեաց Տէր զհրեշտակ իւր , եւ փրկեաց զիս 'ի ձեռաց Հերովդի , եւ յամենայն ակնկալութենէ ժողովրդեանն Հրէից ։ Եւ լեալ 'ի միտս՝ եկն 'ի տուն Մարեմու մօր Յովհաննու , որ կոչեցաւն Մարկոս , ուր էին բազումք ժողովեալ՝ եւ աղօթս առնէին ։ Եւ բախեաց զդուրս տանն · մատ-

եաւ աղախին մի ունէին գնել , որում անուն էր Հռոմդէ ։ Եւ ծանուցեալ զձայնն Պետրոսի 'ի խըն-դալոյն ոչ եբաց զդուռնն ․ 'ի ներքս ընթացեալ պատմեաց եթէ՝ Պետրոս առ դրանն կայ ։ Նոքա ասեն ցնա ․ Մոլիս ։ Եւ նա եւս պնդէր թէ այդ-պէս է ․ եւ նոքա ասէին ․ Հրեշտակ նորա իցէ ։ Եւ Պետրոս առէպ բախէր ․ իբրեւ բացին , տեսին զնա եւ զարմացան ։ Եւ նա ձեռամբ ցուցանէր նոցա լռել , եւ պատմեաց որպէս տէր եհան զնա 'ի բան-տէն , եւ ասէ ․ Պատմեցէք Յակոբայ եւ եղբարց զայս ։ Եւ ելեալ գնաց յայլ տեղի ։ Եւ իբրեւ եղեւ այգ , էր խռովութիւն մեծ 'ի մէջ զինուորացն , թէ զի՞ արդեւք Պետրոսն եղեւ ։ Իսկ Հերովդէս իբրեւ խնդրեաց զնա եւ ոչ եգիտ , հարցեալ ըզ պահապանսն՝ հրամայեաց սպանանել ․ եւ իջեալ 'ի Հրէաստանէ 'ի Կեսարիայ՝ եւ անդ լինէր ։ Եւ էր Հերովդէս ցասմամբ ընդ Տիւրացիս եւ ընդ Սի-դոնացիս ․ եւ նոքա առհասարակ եկին առ նա , 'ի բանի արարեալ զԲղաստոս սենեկապետ արքայի՝ խնդրէին զխաղաղութիւն վասն կերակրելոյ երկ-րին նոցա յարքունուստ ։ Յաւուր միում յերեւել-ւոյ՝ Հերովդէս զգեցեալ էր զհանդերձ թագաւո-րութեան եւ նստէր յատենի , եւ խօսէր ընդ նոսա հրապարակաւ ։ Եւ ամբոխն աղաղակէր՝ թէ Աս-տուծոյ բարբառ է , եւ ոչ մարդոյ ։ Եւ անդէն ե-հար զնա հրեշտակ տեառն , փոխանակ զի ոչ ետ փառս Աստուծոյ ․ եւ եղեալ որդնալից՝ սատակե-ցաւ ։

Եւ ելեալ 'ի Տրովադայ՝ դէպ ուղիղ գնացաք 'ի Սամոթրակէ , եւ 'ի վաղիւ անդր 'ի Նոր քա-

գար , և անտի 'ի Փիլիպպուս , որ է առաջին մի-
ճակ Մակեդոնիացւոց՝ քաղաք Կողոմնիայ ։ Եւ անդ
'ի քաղաքին դադարեալ մեր աւուրս ինչ՝ յաւուր
շաբաթու ելաք արտաքոյ քաղաքին առ գետափնն՝
ուր համարէր աղօթս մատուցանել Պաւղոս , և
նստեալ խօսէաք ընդ ժողովեալ կանայսն ։ Եւ կին
մի անուն Լիդիա ծիրանավաճառ՝ 'ի Թիւատիր
քաղաքէ , երկիւղած յԱստուծոյ՝ լսէր , զորոյ
տէր իսկ եբաց զսիրտն անսալ խօսիցն Պաւղոսի ։
Եւ իբրև մկրտեցաւ ինքն և տուն իւր , աղաչէր
և ասէր ․ Եթէ համարիք զիս հաւատացեալ տեա-
ռըն , մտեալ 'ի տուն իմ ագերուք ․ և բռնադատ-
եաց զմեզ ։ Եւ եղև մինչդեռ երթայաք
մեք յաղօթս , պատահեաց մեզ աղախին մի՝ զոր
ունէր այս հարցուկ , որ շահս բազումս տայր տե-
րանց իւրոց մոլելովն ։ Նա զհետ եղեալ Պաւղոսի
և մեր՝ աղաղակէր և ասէր ․ Արքս այս ծառայք
Աստուծոյ բարձրելոյ են , որ պատմեն ձեզ զճա-
նապարհս փրկութեան ․ և զայս առնէր 'ի բազում
աւուրս ։ Ձանձրացեալ Պաւղոս՝ դարձաւ և ասէ
ցայսն ․ Պատուիրեմ քեզ յանուն Յիսուսի Քրիստո-
սի ելանել 'ի դմանէ ։ Եւ ել այն 'ի նմին ժամու ։
Իբրև տեսին տեարք նորա եթէ հատաւ յոյս շահի
նոցա , առեալ զՊաւղոս և զՇիղա՝ ձգեցին 'ի հրա-
պարակն առ իշխանսն ։ Եւ ածեալ զնոսա առ զօ-
րագլուխսն՝ ասեն ․ Արքս այս խռովեցուցանեն ըզ
քաղաքս մեր ․ ինքեանք Հրեայք են , և պատմեն
մեզ օրէնս , զոր չէ արժան մեզ ընդունել և ոչ
առնել , զի Հռովմայեցիք եմք ։ Եւ կուտեցաւ ամ-
բոխն 'ի վերայ նոցա ։ Եւ զօրագլուխքն պատառե-
ցին զհանդերձս իւրեանց , և հրամայեցին գան

հարկանել ։ Եւ բազում վէրս եդեալ 'ի վերայ նո-ցա՝ արկին 'ի բանտ , պատուիրեցին բանտապահացն զգուշութեամբ պահել զնոսա ։ Որոյ առեալ զայս-պիսի պատուէր՝ արկ զնոսա 'ի ներքին բանտն , զոտս նոցա պնդեաց 'ի կոճեղս ։ Եւ 'ի մէջ գիշե-րոյն Պաւղոս եւ Շիղա կային յաղօթս՝ եւ օրհնէին զԱստուած ։ Ունկն դնէին նոցա կալանաւորքն ։ Եւ եղեւ յանկարծակի շարժումն մեծ , մինչեւ շար-ժել հիմանց բանտին , եւ բացան անդէն դրունքն ամենայն , եւ ամենեցուն կապանքն լուծան ։ Ի-րեւ զարթեաւ բանտապահն եւ ետես բացեալ զդուրս բանտին , ձգեաց զսուսեր՝ եւ կամէր եր-թալ զիւրովին ․ կարծէր փախուցեալ զկապեալսն ։ Եւ կոչեցեալ 'ի ձայն մեծ Պաւղոս եւ ասէ ․ Մի ինչ գործեր ընդ անձն քո չար , քանզի ամենեքին աստ եմք ։ Խնդրեաց լոյս՝ եւ դիմեաց 'ի ներքս , եւ զահի հարեալ՝ անկաւ առաջի Պաւղոսի եւ Շի-ղայի , եւ ածեալ զնոսա արտաքս՝ ասէ ․ Տեարք , զի՞նչ պարտ է ինձ առնել զի ապրեցայց ։ Եւ նոքա ասեն ․ Հաւատա 'ի տէր Յիսուս Քրիս-տոս , եւ ապրեսցիս դու եւ ամենայն տուն քո ։ Եւ խօսեցան նմա զբանն տեառն , եւ ամենեցուն որ էին 'ի տան նորա ։ Եւ առեալ զնոսա 'ի նմին ժամու գիշերոյն՝ լուաց 'ի վիրաց անտի , եւ մկր-տեցաւ ինքն եւ իւրքն ամենեքեան անդէն վաղվաղակի ։ Եւ ածեալ զնոսա 'ի տուն իւր՝ եդ առաջի նոցա սեղան , եւ ուրախ եղեւ ամենայն տամբն՝ հաւատացեալ յԱստուած ։ Եւ իբրեւ այգ եղեւ՝ առաքեցին զօրագլուխքն զնուիրակսն , եւ ասեն ․ Արձակեա զարսդ զայդոսիկ ։ Եւ պատմեաց բանտապահն Պաւղոսի զբանսն՝ եթէ առաքեցին

զօրագլուխքն զի արձակեցիք · արդ՝ ելէք եւ երթայք խաղաղութեամբ ։ Իսկ Պաւղոս ասէ ցնոսա · Գան հարեալ զմեզ հրապարակաւ առս անմեղս Հռովմայեցիս՝ արկին 'ի բանտ, եւ արդ լռելեա՞յն հանեն զմեզ · ոչ այդպէս, այլ եկեսցեն ինքեանք իսկ հանցեն զմեզ ։ Եւ պատմեցին զօրագլխացն նուիրակքն զբանսն ։ Զահի հարան իբրեւ լուան թէ Հռովմայեցիք են, եւ եկեալ աղաչեցին զնոսա Եւ իբրեւ հանին, աղաչեցին գնալ 'ի քաղաքէն ։ Եւ ելեալ 'ի բանտէն՝ մտին 'ի Լիւդիա, եւ տեսեալ զեղբարս՝ մխիթարեցին զնոսա, եւ գնացին ։

Եւ Յաթէնս 'ի մնալն նոցա Պաւղոսի՝ զայրանայր հոգի նորա 'ի նմա, զի տեսանէր 'ի կռապաշտութեան զքաղաքն ։ Եւ խօսէր 'ի ժողովրդեանն ընդ Հրէայսն եւ ընդ պաշտօնեայսն, եւ 'ի հրապարակին զամենայն օր՝ որոց եւ պատահէինն ։ Ոմանք յէպիկուրեանցն եւ 'ի Ստոյիկեանց փիլիսոփայից հակառակէին ընդ նմա, եւ ոմանք ասէին · Զի՞նչ կամիցի սերմանաքաղս այս խօսել ։ Իսկ այլք՝ թէ Օտարոտի իմն Դից թուի պատմիչ լինելոյ · քանզի զՅիսուս եւ զյարութիւնն աւետարանէր ։ Եւ առեալ զնա ածին յԱրիսպագոսն, եւ ասէին · Կարասցո՞ւք իմանալ թէ զինչ է նոր վարդապետութիւնդ որ 'ի քէն պատմի · օտարացուցիչս իմն բերես 'ի լսելիս մեր · կամիմք գիտել թէ զի՞նչ կամիցի այս լինել ։ Զի Աթենացիք ամենեքին եւ եկքն օտարք՝ ոչ յայլ ինչ պարապէին, բայց ասել ինչ, կամ լսել նորագոյնս ։ Եկաց Պաւղոս 'ի մէջ Արիսպագին՝ եւ ասէ · Արք Աթենացիք, ըստ ամենայնի իբրեւ պաշտօնասէրս

տեսանեմ զձեզ · քանզի շրջեալ եւ տեսեալ զպաշտամունս ձեր՝ գտի բագին մի յորում գրեալ էր · Անծանօթի Աստուծոյ ։ Զոր դուք յանծանօթս պաշտէք՝ ես զնոյն պատմեմ ձեզ ։ Աստուած՝ որ արար զաշխարհս եւ զամենայն որ 'ի նմա՝ նա երկնից եւ երկրի է տէր · ոչ 'ի ձեռագործ տաճարս բնակէ , եւ ոչ 'ի ձեռաց մարդկան պաշտի իբրեւ կարօտ իմիք · նա տայ ամենայնի կեանս եւ շունչ եւ զամենայն ինչ · արար 'ի միոջէ արեանէ զամենայն ազգս մարդկան՝ բնակել 'ի վերայ երեսաց ամենայն երկրի · հաստատեաց կարգեալ ժամանակս եւ սահմանադրութիւնս բնակութեան նոցա՝ խնդրել զԱստուած , զի թերեւս զննիցեն զնա եւ գտանիցեն · նա՝ եւ ոչ հեռի իսկ է յիւրաքանչիւր ումեքէ 'ի մէնջ , զի նովաւ կեամք եւ շարժիմք եւ եմք , որպէս ոմանք 'ի ձերոց ճարտարաց ասացին , թէ նորա եւ ազգ իսկ եմք ։ Եւ արդ՝ որովհետեւ ազգ եմք Աստուծոյ , ոչ պարտիմք համարել ոսկւոյ կամ արծաթոյ կամ քարի որ 'ի ճարտարութենէ եւ 'ի մտաց մարդկան քանդակեալ իցէ՝ զաստուածականն լինել նմանող ։ Բայց զժամանակս անգիտութեանն անտես արարեալ Աստուծոյ՝ արդ զայս պատուիրէ մարդկան ամենայն ումեք ապաշխարել ։ Քանզի հաստատեաց օր յորում պատրաստ է դատել զաշխարհս արդարութեամբ 'ի ձեռն առնն՝ որով սահմանեաց տալ հաւատս ամենեցուն՝ յարուցեալ զնա 'ի մեռելոց ։ Ոմանք ծաղր առնէին , կէսքն ասէին · Լուիցուք 'ի քէն վասն այդորիկ միւսանգամ ։ Եւ այսպէս Պաւղոս ել գնաց 'ի միջոյ նոցա ։ Եւ ոմանք արք անկեալք 'ի նա հաւատացին , ընդ որս էր եւ Դիո-

նեօփոս արխապագացի , եւ կլին մի անուն Դամա-րիս եւ այլք ընդ նոսա ։

Եւ իբրեւ կատարեցաւ այս , եղ Պաւղոս 'ի մտի շրջել ընդ Մակեդոնիա եւ ընդ Աքայիա՝ եւ գալ յԵրուսաղէմ . ասէր եթէ՝ Յետ երթալոյն իմոյ անդր՝ պարտ է ինձ եւ զՀռոմ տեսանել ։ Առաքեաց 'ի Մակեդոնիա երկուս 'ի պաշտօնէից իւրոց , զՏիմոթէոս եւ զԵրաստոս , եւ ինքն մնաց ժամանակս ինչ յԱսիա ։ Եւ եղեւ 'ի ժամանակին յայնմիկ խռովութիւն ոչ սակաւ վասն ճանապարհին ։ Իսկ Դեմետրիոս ոմն անուն՝ արծաթագործ՝ գործեր մեհեանս արծաթիս Արտեմիա դից , եւ տայր ճարտարացն լինել ոչ սակաւ շահ . որ ժողովեացն իսկ եւ զձեռագէտս արուեստին , եւ ասէ . Արք , դուք ձեզէն իսկ գիտէք զի յայսմ գործոյ է շահ մեզ . եւ տեսանէք՝ եւ լսէք եթէ ոչ միայն զԵփեսացւոց , այլ գրեթէ ամենայն իսկ Ասիացւոց՝ Պաւղոս այս հաւանեցուցեալ շրջեաց բազում ժողովս՝ ասել թէ ոչ են աստուածք ձեռագործք ։ Եւ ոչ միայն այս ճգնէ զմեր կողմն գալ 'ի յանդիմանութիւն , այլ եւ զմեծին աստուծոյ Արտեմեայ զմեհեանն յոչինչ համարել . նա՝ եւ քակելոց եւս իցէ մեծութիւն նորա , զոր ամենայն Ասիա՝ եւ տիեզերք պաշտեն ։ Եւ զայս իբրեւ լուան , լի եղեն բարկութեամբ , աղաղակէին եւ ասէին . Մեծ է Արտեմիս Եփեսացւոց ։ Եւ լցաւ քաղաքն խռովութեամբ . դիմեցին առ հասարակ 'ի թեատրոնն , յափշտակեցին զԳայիոս եւ զԱրիստարքոս Մակեդոնացի՝ զուղեկիցսն Պաւղոսի ։ Բայց Պաւղոս իբրեւ կամեցաւ մտանել յամբոխն ,

ոչ թողլին զնա աշակերտքն ։ Ոմանք և յաշխարհակ-ացն որ էին նորա բարեկամք՝ յղէին առ նա և աղաչէին մի տալ զանձն 'ի թեատրոնն ։ Այլք այլ ինն աղաղակէին յամբոխին, զի էր ժողովն նոցա խառնեալ . և բազումք 'ի նոցանէ ոչ գիտէին թէ վասն որո ժողովեալ իցեն ։ Եւ յամբոխին բազմութենէ յառաջ կալան զԱղեքսանդրոս . և իբրև ածին զնա յառաջ Հրեայքն , Աղեքսանդրոս շարժեաց զձեռն և կամէր պատասխանի տանել ամբոխին ։ Իբրև գիտացին թէ այրն Հրեայ է , միաբարբառ եղեալ ամենեցունց՝ իբրև ժամս երկուս աղաղակեցին , թէ Մեծ է Արտեմիս Եփեսացւոց ։ Լռեցոյց դպրապետն զամբոխն և ասէ . Արք Եփեսացիք , իսկ ո՞վ է 'ի մարդկանէ որ ոչ գիտէ զԵփեսացւոց քաղաքս մեհենապաշտ՝ մեծին Արտեմեայ զիցն և Դիոպետեայ . և զի այդ այդպէս է անշուշտ , պարտ է ձեզ հանդարտել , և մի ինչ յանդգնութեամբ գործել ։ Ածէք զարս զայդոսիկ այսր , ոչ մեհենակապուտս՝ և ոչ հայհոյիչս աստուածոյն մերոյ ։ Զի եթէ Դեմետրիոս և որ ընդ նմա ճարտարքս՝ ունիցին ինչ ընդ ումեք բանս , ատեանք երթիցեն . և դատաւորք գոն , և ամբաստան լիցին զմիմեանց ։ Ապա թէ վասն այլ իրիք խնդիր իցէ , յօրինաւոր ժողովն վճարեսցի ։ Քանզի և մեզ վիշտ վտանգի է ընդ կռուոյս այսր աւուր առանց իրիք յանցանաց լինելոյ՝ զորմէ ոչ կարասցուք պատասխանի տալ ։ Եւ զայս ասացեալ՝ արձակեաց զժողովն ։

Եւ իբրև այդ եղև , արարեալ ժողով Հրէիցն՝

նզովեցին զանձինս ոչ ուտել եւ ոչ ըմպել՝ մինչեւ սպանցեն զՊաւղոս ։ Եւ էին աւելի քան զքառասուն՝ որոց զայս ընդ միմեանս երդմունս արարեալ էր ։ Արք մատեան առ քահանայապետսն եւ երիցունս եւ ասեն ․ Նզովիւք նզովեցաք զանձինս ոչինչ ճաշակել՝ մինչեւ սպանցուք զՊաւղոս ։ Բայց դուք զգացուցէք հազարապետին հանդերձ ատենիւն, զի իջուսցէ զնա առ ձեզ, որպէս թէ կամիցիք ճշմարտագոյնս ինչ գիտել զնմանէ ․ եւ մեք յառաջ քան զմօտել նորա՝ պատրաստ եմք ՚ի սպանանել զնա ։ Եւ լուեալ քեռորդւոյն Պաւղոսի ըզ դաւաճանութիւնն՝ եկն եմուտ ՚ի բանակն անդր, պատմեաց Պաւղոսի ։ Եւ կոչեցեալ Պաւղոսի առ ինքն զմի ՚ի հարիւրապետացն՝ ասէ ․ Զպատանիս զայս տար առ հազարապետն, զի ունի ինչ պատմել նմա ։ Եւ նորա առեալ զնա տարաւ առ հազարապետն եւ ասէ ․ Կապեալն Պաւղոս կոչեաց զիս, եւ աղաչեաց զպատանիս զայս ածել առ քեզ ․ ունի ինչ խօսել ընդ քեզ ։ Առեալ զձեռանէ նորա հազարապետին՝ գնաց միկուսի, հարցանէր՝ թէ Զի՞նչ ունիս խօսել ընդ իս ։ Եւ նա ասէ ․ Հրեայքն միաբանեցին աղաչել զքեզ, զի վաղիւ ըզ Պաւղոս իջուցես յատեանն, իբրեւ թէ կամիցին ինչ ճշմարտագոյնս հարցանել վասն նորա ․ արդ՝ դու մի անսայցես նոցա ․ քանզի դարան գործեալ է նմա ՚ի նոցանէ արանց աւելի քան զքառասուն, որք նզովեցին զանձինս ոչ ուտել եւ ոչ ըմպել՝ մինչեւ սպանցեն զնա ․ արդ՝ պատրաստ են եւ սպասեն քում հրամանի ։ Ապա հազարապետն արձակեաց զպատանին՝ պատուիրեալ մի ումեք ասել թէ զայս զգացուցեր ինձ ։ Եւ կոչեաց երկուս

'ի հարիւրապետացն՝ եւ ասէ . Պատրաստեցէք զօ-
րականս երկերիւր , որպէս զի երթիցեն մինչեւ 'ի
Կեսարիա . եւ հեծեալս եօթանասուն եւ տիգա-
ւորս երկերիւր՝ յերիր ժամու գիշերոյն , եւ գը-
րաստս պատրաստականս , որպէս զի իջուցեալ ըզ
Պաւղոս ապրեցուսցեն ։ Եւ առ Փելիքս դատաւոր
գրեաց թուղթ որ ունէր օրինակ զայս . « Կղաւ-
դիոս Լիւսիաս առ քաջ դատաւոր Փելիքս ող-
ջոյն ։ Զայրս զայս կալեալ 'ի Հրէից եւ մերձ 'ի
սպանանել 'ի նոցանէ՝ հասեալ 'ի վերայ զօրակա-
նաւ ապրեցուցի՝ իմացեալ թէ հռովմայեցի է ։
Կամեցայ գիտել զվնասն վասն որոյ ամբաստա-
նէին զդմանէ , իջուցի զդա յատեան նոցա ։ Զոր
գտի ամբաստանեալ վասն խնդրոյ իրիք իւրեանց
օրինաց . եւ ոչինչ արժանի մահու կամ կապանաց
ունէր վնաս ։ Իբրեւ ազդ եղեւ ինձ նենգութեան
յայրդ լինելոյ 'ի նոցանէ , յղեցի առ քեզ՝ հրաման
տուեալ եւ չարախօսացն խօսել զդմանէ առաջի
քո . ողջ լեր » ։ Եւ զօրականացն ըստ հրամանի
նորա առեալ զՊաւղոս՝ ածին գիշերայն յԱնտի-
պատրիս , եւ 'ի վաղիւ անդր արձակեալ զհեծեալ-
սն ընդ նմա երթեալս՝ դարձան 'ի բանակն ։
Նոքա մտին 'ի Կեսարիա , եւ տուեալ ցդատաւորն
զթուղթն՝ առաջի կացուցին նոցա եւ զՊաւղոս ։
Իբրեւ ընթերցաւ , եհարց թէ յորմէ՞ նահանգէ ի-
ցէ . եւ ստուգեալ եթէ 'ի Կիլիկեայ է , Լուայց
քեզ , ասէ , յորժամ եւ չարախօսքն քո եկեսցեն .
եւ հրամայեաց յապարանսն Հերովդի պահել զնա ։

ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ

Լուծման մէջ տղոց առաջին ընելու բանն էր բառազննութիւնը ։

Տղաք աս գրքին Առաջին և Երկրորդ մասին մէջ սորվեցան բառազննութիւնը որ է խօսքի մէջ գտնուած բառերուն ընութիւնը և պատահմունքները ճանչնել ։ Հիմա կը մնայ լուծման երկրորդ և աւելի կարեւոր գործողութիւնը , այսինքն՝ վերլուծութիւնը որ բուն լուծումն է ։

Վերլուծութեան մէջ ալ տղաք ընելու երկու բան ունին . Ա . խօսք մը քերականօրէն վերլուծել , Բ . խօսք մը տրամաբանօրէն վերլուծել ։

Գ . ՄԱՍՆ

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ

1 . Քերականական վերլուծութեան մէջ տղաք խօսք մը կազմող իւրաքանչիւր նախադասութիւն իր մասերուն ջոկի լուծեն ։

ԳԻՏԵԼԻՔ

2 . Նախադասութիւն կ՚ըսուի խօսք մը՝ որուն մէջ ենթակայ բայ մը տէր բայէ մը և ստորոգելի (Ուղղական խնդիր) մը կայ . զոր օ-

րինակ ․ Աստուած է արդար ․ Դու ես մեծ , նախադասութիւն են , քանզի երկուքին մէջ ալ Դիմաւոր բայ կայ՝ Է , Ես ․ Տէր բայի Աստուած , Դու , և Ստորոգելի՝ Արդար , Մեծ ։

3 ․ Երբ բայն ածական բայ մըն է , այսինքն՝ Էական բայէն զատ ուրիշ բայ մը ․ Ստորոգելին կամ Ուղղական խնդիրը Էական բային հետ միացած կ՚ըլլայ ․ զոր օրինակ ․ Ննջեմ՝ Ննջող եմ ․ Սիրեմ՝ Սիրող եմ ըսել է ։

4 ․ Խօսքի մը մէջ որչափ դիմաւոր բայ կայ , այնչափ նախադասութիւն կայ ․ զոր օրինակ ․

Որ սիրէն զիս՝ սիրեսցի ՚ի Հօրէ իմմէ ․

Եթէ առնես ողորմութիւն , մի գիտասցէ ձախ քո՝ զինչ գործէ աջ քո ։

Այս խօսքերուն առջինին մէջ՝ Երկու նախադասութիւն , երկրորդին մէջ՝ Երեք նախադասութիւն կայ․ քանզի առջինին մէջ Երկու դիմաւոր բայ կայ , երկրորդին մէջ՝ Երեք ։

5 ․ Նախադասութիւն մը կը լմննայ Յարաբերական դերանունէ , կամ Շաղկապէ մը անմիջապէս առաջ ․ ուստի խօսքին ընթացքին մէջ դիմաւոր բայէ մը ետքը Յարաբերական մը կամ Շաղկապ մը գալուն պէս՝ առջի նախադասութիւնը կը լմննայ և նոր մը կը սկսի ։

6 ․ Խօսք մը քերականօրէն վերլուծելու ատեն՝ պէտք է որ առաջ նախ խօսքին մէջ

գտնուած նախադասութիւնները զատէն , զոր օրինակ .

Մինչեւ հայր ոք յորժամ զորդի իւր խը- րատիցէ | որ կարող իցէ ուսումն ինչ ուսա- նել , | յառաջագոյն լինել՝ ի բան առնէ . | ժամն զի գիտէ | եթէ կարող է յառաջադէմ լինել՝ | պահանջէ զուսումն | յոր աւանդե- ցաւ :

7 . Այսպէս նախադասութիւնները զա- տելէն ետքը՝ իւրաքանչիւր նախադասու- թիւն իր մասերուն պիտի լուծեն . այսինքն՝ իւրաքանչիւր Նախադասութեան բառե- րուն նոյն նախադասութեան մէջ կատարած ՊԱՇՏՕՆՆԵՐԸ պիտի իմացնեն :

8 . Տուգ բերականութեան երկրորդ մա- սին , կամ Շարահիւսութեան մէջ տեսած են որ բառերը խօսքի մէջ այլ և այլ պաշ- տօններ կը կատարեն , այսինքն՝ խօսքին մէջ կ'ըլլան Ա. ՏԷՐ ԲԱՅԻ . Բ. ՍՏՈՐՈԳԵԼԻ (Սեղա- կան խնդիր) , Գ. ԽՆԴԻՐ . Դ. ԲԱՑԱՅԱՅՏԻՉ և Ե. ԿՈՉԱԿԱՆ .

Ա. 1. Տէր բային որ Անձնական ալ կ'ըսուի՝ բան մը ԸՆՈՂԸ կամ ըլլողն է . զոր օրինակ երբ կ'ըսեմ ՆԱՊՈԼԷՈՆ ՄԵԾ Է . ՍԵՐԸ ԾԱՂԿ- ՆՈՑԻ Է . Արդար ԸՆՈՂ ով է — Աստուած . Մահկանացու ԸՆՈՂ ով է — Մարդ . ապա այն խօսքերուն մէջ Նապոլէոն , Սերը Տէր բայի կամ Անձնական են . Նոյնպէս երբ կ'ը-

սեմ ԱՍՏՈՒԱԾ ԱՐԱՐ ԶԵՐԿԻՆՍ և ԶԵՐԿԻՐ · ՄԱՐԴԻԿ ՀԱՄԱՐ ՓԱՌԱՑ ԵՆ ԱՍՏՈՒԾՈՅ · Երկինքն ու երկի-րը ԸՐՈՂԸ ով է — Աստուած · Աստուծոյ հա-մար ՓԱՌԱՒՈՐՈՂՆԵՐԸ ով են — Մարդիկ · ուրեմն այս խօսքերուն մէջ ալ ԱՍՏՈՒԱԾ , ՄԱՐԴԻԿ Տէր բայի են ։

2 · Տէր բային սովորաբար դիւական մը կամ դերանուն մըն է . նաեւ դիւականաբար առնուած ածական մը , անորոշ դերբայ մը և ամբողջ խօսք մը կրնան Տէր բայի ըլլալ ։ Օր օրինակ երբ կ'ըսեմ · Պարտ է ԳՈՐԾԵԼ , ԳՈՐԾԵԼ անորոշ դերբայն՝ է բային Տէր բային է . երբ կ'ըսեմ՝ ՈՐ ՈՉ ԳՈՐԾԷ՝ կերիցէ մի . այս խօսքին մէջ ալ ՈՐ ՈՉ ԳՈՐԾԷ ամբողջ խօսքը՝ ԿԵՐԻՑԷ բային Տէր բային է ։

3 · Դարձեալ Տէր բայի եղող բառը սո-վորաբար ուղղական հոլով կ'ըլլայ · բայց երբեմն Տէր բային սեռական կամ տրական կամ ուրիշ հոլոված բառ մ'ալ կրնայ ըլլալ ։ Տղաք արդէն քերականութեան մէջ սորված են որ Տէր բային քանի մը մասնաւոր դէպ-քի մէջ սեռական կամ տրական ալ կ'ըլլայ ։

Ր · 1 · Ստորոգելի կամ ուղղական խըն-դիր ան բառն է որ բայի մը , սովորաբար Էակին բային , միջոցաւ՝ բանի մը այս ինչ յատկութիւնը , վիճակը , պաշտօնը , յա-րաբերութիւնը անունը , կամ ախոզոն ու-նենալը կը հաստատէ կամ կը ժխտէ ։ Ստո-

բաղկելին՝ [illegible] կամ [illegible] [illegible] հարցմամբ կրնայ ճանչցուիլ. զոր օրինակ՝ սա խօսքերուն մէջ՝ [illegible] [illegible] է. [illegible] էր [illegible] [illegible]. [illegible] [illegible] [illegible]. [illegible] [illegible] [illegible] [illegible]. [illegible] [illegible] [illegible]. Աստուած ինչպէս կամ ինչպիսի է — [illegible]. Պատարոս ինչպէս էր — [illegible]. Ձիս ինչպիսի րան կայցյց — [illegible]. Դուք ինչպիսի րան էք — [illegible]. Դուն ինչպէս պիտի կըլլաս — [illegible]։ Արդար՝ յստակութիւն կը ցուցնէ, Հիւանդ՝ վիճակ, Պատուոր՝ պաշտօն, Բարեկամ՝ յարաբերութիւն, Կեփաս՝ անուն կամ տիտղոս։

2. Ստորոգելին կամ ուղղական խնդիրն ուղղական կամ անորոշ հայցական կըլլայ. ուղղական կ՚ըլլայ, երբ բային տէր բայինն կը վերաբերի. անորոշ հայցական կ՚ըլլայ, երբ սեռի խնդրոյն կը վերաբերի։

Գ. Խնդիր կ՚ըսուի ան բառը որ ուրիշ բառի մը սկսած իմաստը կ՚ամբողջացնէ կամ կը լրացնէ, զոր օրինակ երբ կ՚ըսեմ՝ [illegible], բառին իմաստն ընդհանուր և թերի է, բայց երբ կ՚ըսեմ [illegible] [illegible] [illegible], [illegible] բառը՝ [illegible] բառով ըսկսուած իմաստը կ՚ամբողջացնէ. նոյնպէս երբ կ՚ըսեմ՝ [illegible] [illegible], սա խօսքին ալ իմաստը թերի է. բայց երբ կ՚ըսեմ [illegible] կը սիրէ [illegible], [illegible] բառը՝ [illegible] կը սե-

րէ խօսքին սկսած իմաստը կ'ամբողջացնէ . ուստի Թագաւորին , Որդին բառերը՝ Գովելու , և Հայրը կը սիրէ խօսքերուն մէջ խնդիր են ։

Խնդիրը չորս տեսակ է . Ա . Որպիսութիւն ցուցնող խնդիր , Բ . Սեռի խնդիր , Գ . Ստուգութեան խնդիր , Դ . Պարագայ ցուցնող խնդիր ։

Ա . Որպիսութիւն ցուցնող խնդիրն է Ածականը որ բառի մը որպիսութիւնը կամ յատկութիւնը կը ցուցնէ . զոր օրինակ՝ Որդի իմաստուն ուրախ առնէ զհայր իւր , խօսքին մէջ՝ Իմաստուն ածականը Որդի բառին որպիսութիւնը ցուցնող խնդիրն է . եթէ աս խնդիրը չըլլայ , Որդի բառին իմաստն՝ անկատար , խօսքն ալ սխալ կ'ըլլայ ։

Բ . 1 . Սեռի խնդիրն ան հայցական հոլովն է որ ներգործական բայի մը Տէր բային գործողութեան առարկան կամ ըրածը կը ցուցնէ , զոր օրինակ՝ վերի խօսքին մէջ , Որդի իմաստուն ուրախ առնէ զհայր իւր . Զհայր իւր՝ ուրախ առնէ բային սեռի խնդիրն է . Իմաստուն որդւոյն ուրախ ըրածն ի՞նչ բան կամ ո՞վ է — Հայրը ։

2 . Սեռի խնդիրը սովորաբար գոյական մը կամ գերանուն մըն է , բայց գոյականաբար առնուած Ածական մը , Անորոշ դերբայ մը , նաև ամբողջ խօսք մը կրնան Սեռի խնդիր ըլլալ . զոր օրինակ՝ երբ կ'ըսեմ

կամիմք տեսանել զնա · տեսանել ամբողջ դեր-բայը Սեռի խնդիր է կամիմքին ։ ՙՆոյնպէս սա խօսքին մէջ՝ Հարցանէր թէ ուր ծը-նանիցի Քրիստոսն , Թէ ուր ծնանիլը Քրիստոսին ամբողջ խօսքը՝ հարցանէրին սեռի խնդի-րն է ․

3 · Հայցականը միշտ սեռի խնդիր չէ ։ Հայցականը սեռի խնդիր չէ , երբ 1 · ժա-մանակի տեւողութիւն , 2 · ձեւ կամ եղա-նակ , 3 · չափ , 4 · ճամբայ կը ցուցնէ , զոր օրինակ՝ սա խօսքին մէջ · Օ՛ր մը գոր-ծեցեք · Մէկ օր՝ գործեցեքին սեռի խնդիրը չէ , այլ ժամանակի տեւողութիւն ցուցու-նող հայցական բնութեան խնդիր է , և Ո՞ր-չափ ատեն հարցման պատասխան է ։

Խօսեցաւ չորս օրինակ խօսքին մէջ այ՝ չորս օրինակ խօսեցաւին սեռի խնդիրը չէ , ձեւ կամ եղանակ ցուցնող հայցական բնու-թեան խնդիր է , և Ի՞նչ կերպով հարցման պատասխան է ․

Ա՛ր որք արբուցէ միում ՛ի փոքրկանցս յայսցանէ բաժակ մի ջուր · խօսքին մէջ այ՝ ջուր սեռի խնդիր է արբուցէին , բաժակ մի չափ ցուցանող հայցական բնութեան խնդիր է նոյն բային , և Ո՞րչափ ջուր հարց-ման պատասխան է ․

Երթիցէք զճանապարհ ձեր խօսքին մէջ այ՝ ըզ-ճանապարհ ձեր երթիցէքին սեռի խնդիրը չէ ·

բնութեան խնդիր է ․ Ո՞ր ճամբան հարցման պատասխան է ։

Գ․ 1․ Բնութեան խնդիր են՝ Տրակա-նը, բացառականը, գործիականը, և նա-խադրութեամբ խնդիրներ ։

2․ Սեռականն ալ գոյականին բնութեան խնդիրն է, և Հայերէն Յատկացուցիչ կը կոչուի․ զոր օրինակ՝ Եմուտ 'ի սրահ քա-հանայապետին․ խօսքին մէջ՝ քահանայապետին սեռականը սրահ բառին յատկացուցիչն է ։

Դ․ 1․ Պարագայ ցուցող խնդիր են Մակբայներն ու նախադրութեամբ խըն-դիրներէն ոմանք ։

2․ Պարագայ կը կոչուին գործողութեան մը Ժամանակը, Տեղը, Պատճառը, Նպա-տակը, և Կերպը կամ Եղանակը․ զոր օրի-նակ․

Այսօր ընդ իս իցես 'ի դրախտին․ այս խօսքին մէջ այսօր մակբայը ժամանակի պա-րագայ մը կը ցուցունէ ։

Տեղ ունի աւելցը 'ի դրախտին Ա-ռաջինի․ Յաւուր Հերովդի արքայի․ այս խօսքերուն մէջ՝ 'ի դրախտին, յաւուր՝ ի, յ նախադրութեամբ խնդիրները՝ ժամանա-կի պարագայ կը ցուցնեն ։

Ժամանակի պարագան Ե՞րբ հարցմամբ կը ճանչցուի ։

Ո՞ւր էր թագաւորայն մի․ այս խօսքին մէջ

[illegible] մակբայը տեղւոյ պարագայ կը ցուցնէ ։

Եկին [illegible] Միմոնի. Նստէր [illegible]. աս խօսքերուն մէջ ալ [illegible], [illegible]՝ [illegible] նախադրութեամբ խնդիրները տեղւոյ պարագայ կը ցուցնեն ։

Տեղւոյ պարագան Ո՞ւր հարցմամբ կը ճանչցուի ։

[illegible] մատնեցին զնա. [illegible] [illegible] կոչեցաւ մեծ. աս խօսքերուն մէջ — [illegible], [illegible] [illegible] նախադրութեամբ խնդիրները [illegible] պարագայ կը ցուցնեն ։

Պատճառի պարագան՝ [illegible], [illegible], [illegible] հարցմամբ կը ճանչցուի ։

Լուսաւորքդ [illegible] [illegible] [illegible] արտաքին. Հայրդ և արմուդ [illegible] [illegible] ձեզ. [illegible] [illegible] կամ — [illegible] [illegible] եկեալ եմ. աս խօսքերուն մէջ ալ՝ [illegible] [illegible] [illegible]. [illegible] [illegible], [illegible] [illegible] կամ — [illegible] [illegible] նախադրութեամբ խնդիրները նպատակ կը ցուցնեն ։

3. Երբ անորոշ դերբայները պատճառ կամ նպատակ ցուցունող ընութեան խնդիր են, շատ անգամ անոնցմէ առաջ — [illegible] — կամ [illegible], այսինքն՝ [illegible], համար՝ նշանակող նախադրութիւնները զանց կ՚առնուին, և խօսքին իմաստէն, կամ [illegible] [illegible], [illegible] [illegible] հարցումէն կրնայ հասկցուիլ Անորոշ դերբային պատճառ կամ նպատակ ցու-

ցունելը . զոր օրինակ սա խօսքին մէջ . Դշխոյն Հարաւոյ եկն լսել զիմաստութիւն Սողոմոնի . լսել՝ տիպի բայ — ՚ի կամ ՚ի ըն-ռել . վասն զի նպատակ կը ցուցնէ . Լսել նպատակաւ եկաւ — Սողոմոնին իմաստութիւնը լսելու նպատակաւ կամ լսելու համար ։

Նպատակի կամ դիտաւորութեան պարագան՝ Ինչ նպատակաւ , Ինչու համար հարցմամբ կը ճանչցուի ։

Որպէս խօսեցաւ . Զօրաւոր ամպեալ . սա խօսքերուն մէջ Որպէս , Զօրաւոր մակբայները Եղանակի պարագայ կը ցուցնեն ։

Եղանակի պարագան Ինչպէս հարցմամբ կը ճանչցուի ։

Դ. 1 . Բացայայտիչ կ՚ըսուի մէկ կամ քանի մը բառ որոնք տարբեր կերպով ուրիշ բառ մը կը բացատրեն . զոր օրինակ՝ Արմենակ , երէց որդի Հայկայ . Երէց որդի Հայկայ բառերը բացայայտիչ են Արմենակին ։

2 . Բացայայտիչը բացայայտեալին հետ միենոյն է , միայն տարբեր բառերով ըսուած է . ինչպէս վերի օրինակին մէջ՝ Արմենակ և Երէց որդի Հայկայ միենոյն անձը կը ցուցնեն տարբեր անուամբ ։

Ե . Կոչականը ուղղական հոլով մըն է որ ան ատեն կը գործածուի , երբ մէկը իւր խօսքը երկրորդի մը կ՚ուղղէ բացադարձութեամբ . զոր օրինակ՝ Յովսէփ , մի երկնչիր

առնուլ քեզ զՄարիամ կին քո · **Յովսէփ** կոչական է, քանզի խօսողը (Աւետարանին մէջ հրեշտակը) իր խօսքն անոր կ'ուղղէ ·

9 · Նանք գիտնալէն ետքը՝ ոչ թէ խօսք մը հետևեալ կերպով կրնան քերականօրէն լուծել · նախ իւրաքանչիւր նախադասութեան մէջ գլխաւոր բայը յիշելով · ետքը՝ Տէր բային, և ետքը՝ մնացեալ մասերը · այսինքն՝ Ստորոգելին կամ Ուղղական խնդիրը · Սեռի և Նութեան խնդիրները, Բացայայտիչը, Կոչականը, ասոնց որն որ գտնուի նախադասութեան մէջ ·

### ՕՐԻՆԱԿ ԿԱՄ ԿՐԹՈՒԹԻՒՆ

### ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹԵԱՆ

Երբեւ գնացին նոքա (մոգքն) անտի, | ահա հրեշտակ Տեառն երևէր 'ի տեսլեան Յովսեփու | և ասէր · | Արի, | առ զմանուկդ և զմայր իւր | և փախիր յԵգիպտոս | և անդ լինիջիր՝ | ցորժամ ասացից քեզ · | քանզի 'ի խնդիր է Հերովդէս կորուսանել զմանուկդ · |

Այս խօսքին մէջ ինը նախադասութիւն կայ · քանզի ինը գլխաւոր բայ կայ ·

Առաջին նախադասութիւնն է՝

Երբեւ գնացին նոքա անտի ·

Գնացին՝ բայ · տէր բային է՝ նոքա · անտի՝ մակբայ է, տեղւոյն պարագան կը ցուցունէ, այսինքն Երուսաղեմէն որ նախընթաց

*խօսքին մէջ յիշուած է . [illegible]՝ շաղկապ ։*

*Երկրորդ նախադասութիւնն է՝*

Ա՞նա հրեշտակ տեսան երեւէր 'ի տեսլեան Յով-հաննու .

*[illegible]՝ բառ . տէր բայն է՝ [illegible] . [illegible]՝ յատկացուցիչ խնդիր հրեշտակին , այսինքն՝ [illegible] հրեշտակը — Տէրոջը . [illegible]՝ նախդրութեամբ խնդիր [illegible] , տեղւոյ կամ ժամանակի պարագայ կը ցուցնէ , այսինքն՝ [illegible] կամ [illegible] կ'երեւար — Տեսիլքի մէջ . [illegible]՝ տրական խնդիր [illegible] . [illegible] (բխմէ) կ'երեւար — Յովհաննին . [illegible]՝ մակբայ է , ժամանակի պարագայ կը ցուցնէ . [illegible]՝ կը նշանակէ [illegible] ։*

*Երրորդ նախադասութիւն՝*

Եւ տեսէր .

*[illegible]՝ բառ . Տէր բայն է [illegible] այսինքն՝ հրեշտակը , հետեւեալ ամբողջ խօսքը՝ Արի . տու , եւայլն , [illegible]ին սեռի խնդիրն է , քանզի բանը այն խօսքն է , [illegible]՝ շաղկապ ։*

*Չորրորդ նախադասութիւն՝*

Արի ,

*[illegible] բառ է . Տէր բայն է [illegible] որ զօրու-թեամբ կ'իմացուի , այսինքն՝ Յովհանէս ։*

*Հինգերորդ նախադասութիւն՝*

Առ զմանուկդ եւ զմայր իւր .

*[illegible]՝ բառ . Տէր բայն է [illegible] , զօրու-թեամբ այսինքն՝ Յովհանէս , [illegible] եւ [illegible] սեռի խնդիր հայցական են , այսինքն՝ առնելու բանը կը ցուցնէ .*

Վեցերորդ նախադասութիւն՝

Եւ փախիր յԵգիպտոս .

Փախիր՝ բայ . տէր բային է դու , զօրութեամբ , այսինքն՝ Յովսէփ . յԵգիպտոս՝ յ նախադրութեամբ խնդիր Եգիպտոսին , տեղւոյ պարագայ կը ցուցունէ , այսինքն՝ ո՞ւր փախչի — Եգիպտոս . Եւ՝ շաղկապ .

Եօթներորդ նախադասութիւն՝

Եւ անդ լինիջիր .

Լինիջիր՝ բայ . տէր բային է դու , զօրութեամբ , այսինքն՝ Յովսէփ . անդ՝ մակբայ . տեղւոյ պարագայ կը ցուցունէ , այսինքն՝ ո՞ւր եղիր ( մնացիր ) — Եգիպտոս . Եւ՝ շաղկապ .

Ութերորդ նախադասութիւն՝

Ցորժամ ասացից քեզ .

Ասացից՝ բայ . տէր բային է՝ ես , զօրութեամբ , այսինքն՝ Հրեշտակը . քեզ՝ տրական խնդիր ասացիցին . այսինքն՝ որո՞ւ ըսեմ — քեզի . Ցորժամ՝ մակբայ , ժամանակի պարագայ կը ցուցունէ , այսինքն՝ մինչեւ ե՞րբ մնացիր — մինչեւ ան ատենը որ . . . Ցորժամ՝ մինչեւ ան ատենը կամ մինչեւ որ . . . կը նշանակէ .

Իններորդ նախադասութիւն՝

Քանզի ՚ի խնդիր է Հերովդէս կորուսանել զմանուկդ .

Ի խնդիր է՝ բայ ( ՚ի խնդիր լինել՝ ետեւէ ըլլալ . ջանալ կը նշանակէ . ) տէր բային է՝

Ներամփես · Կր——ածել · փոխանակ՝ — Դ Կր——ածել · նախադասութեամբ խնդիր՝ Դ Ի՞նչէ ին · Նպատակ կը ցուցունէ · այսինքն՝ Ի՞նչ նպ——ակ—— ի խնդիր է · կը ջանայ — կրթուածներու համար · ը՞——ն——կր՝ սեռի խնդիր կր——ածել ին · քանզի կր——ածել ջանացածը՝ մանուկն է · ——ի՞՝ չափկայ ։

10 · Տղաք խօսք մը ոչ լոկ նիւթապէս, այլ մտադրութեամբ և հակնալով լսելու են եթէ՝ կրնան շատ դիւրաւ թարգմանել · ուստի վերի խօսքը կը թարգմանուի այսպէս ․

Երբ անոնք (մոգերը) գացին (մեկնեցան), ահա Տէրոջը հրեշտակը անուրջի մէջ Յովսեփին երեւնալով ըսաւ · Ել, մանուկն ու մայրն առնելով՝ Եգիպտոս փախիր, եւ հոն մնա մինչեւ որ քեզի ըսեմ (Նորէն լուր տամ) · քանզի Հերովդէս մանուկը կորուսանելու հետամուտ է ։

11 · Տղաք քերականութեան երրորդ մասին, այսինքն Շարադասութեան մէջ սորվեցան որ խօսքին շարքը կրկին է՝ Քերականական և Ձեւաւոր, այսինքն՝ նախադասութեան մասերը՝ Տէր բային, խնդիրներ, ստորոգելին, և այլն, երկու կերպով կրնան շարուիլ · մէկ մը՝ բն——ական կարգով · այսինքն նախ Տէր բային իր մասերովը կամ խնդիրներովը, ետքը բայը, և բայէն ետքը բային վերաբերեալ կամ բային իմաստն ամբողջացնող մասերը · և դարձեալ թէ՝ խնդիրը

բնական կարգով խնդրառու բառէն ետքը կու գայ ։ Երկրորդ յ[illegible] կարգով ։ Տըղաք գիտեն որ քերականական ձեւերը չորս են՝ 1 · [illegible] , 2 · Զեղչում , 3 · Ա-ւելադրութիւն և 4 · [illegible] ։

1 · [illegible] կ'ըսուի նախադասութեան շարքը , երբ նախադասութեան մասերը վե-րը յիշուած բնական կարգէն տարբեր կար-գով կը շարուին , զոր օրինակ՝ տէր բային բայէն ետքը , բային խնդիրը բայէն առաջ , կամ խնդիր մը խնդրառուէն առաջ . զոր օրինակ՝ յատկացուցիչը յատկացեալէն , եւայլն ։

2 · Զեղչեալ կ'ըսուի նախադասութիւն մը , երբ նախադասութեան մէկ մասը , զոր օրինակ՝ բայը , կամ Տէր բային , կամ խըն-դիր մը , զօրութեամբ կամ իմաստով կ'ի-մացուի · զոր օրինակ՝ Հետեւեալ խօսքին մէջ շատ մը զեղչեալ նախադասութիւններ կան .

Որ առողջ միտս ունին՝ | [illegible] | այլ ըղ-ձարմիչն պարտին փառաւորել · | [illegible] | այլ ընդ վարկիչն պարտին զարմանալ · | [illegible] | քանզի եւ նոքին իսկ արարածք իւրաքանչիւր փոփոխ-մամբք յայտ առնեն՝ | եթէ է ոմն | որ փոփոխէ զնոսա · | [illegible] · | [illegible] | [illegible] |

Այս խօսքին մէջ 13 նախադասութիւն կայ․ նօտր գրով նշանակուածները զեղչեալ են․ Այս զեղչեալ նախադասութիւնները հետեւեալ կերպով կը լրանան․

Որ առողջ միտս ունիմ՝ | ոչ դշարժունսն [illegible] [illegible], | այլ դշարժիչն պարտին փառաւորել․ | եւ ոչ ընդ արբանեակսն [illegible] [illegible], | այլ ընդ վարիչն պարտին զարմանալ․ | եւ ոչ ընդ գնայունսն [illegible] [illegible], | այլ ընդ գնացուցիչն [illegible] [illegible], | քանզի եւ նոքին իսկ արարածք իւրաքանչիւր փոփոխմամբք յայտ առնեն | եթէ է ումն | որ փոփոխէ զնոսա․ | Արեգակն ծագելովն եւ մերանալով եւ 'ի մուտս դառնալով [illegible] [illegible] | [illegible] [illegible] | [illegible] [illegible], | եւ լուսին աճմամբ լնլով եւ նուազելով [illegible] [illegible] | [illegible] [illegible] | [illegible] [illegible]․ եւ այլք եւս յարարածոց բոլոր իւրաքանչիւր ընթացից շարժելովն եւ դադարելով [illegible] [illegible] | [illegible] [illegible] | [illegible] [illegible]․

Այս խօսքին մէջ նօտր գրով նշանակուած մասերը նախընթաց խօսքին մէջ զեղչեալ էին։ Ինչպէս աս օրինակէն յայտնի է, երբ երկու կամ աւելի նախադասութեանց մէջ միենոյն մասերը կան, նոյն մասերը նախադասութեանց մէկուն մէջ միայն կը գրուին, միւսներուն մէջ կը զեղչուին։

3․ Ներադրութեամբ է նախադասութիւն մը երբ նախադասութեան միենոյն մասը երկու տարբեր բառով բացատրուած, ուստի եւ աւելի է, զոր օրինակ՝

Կինն զոր ետուր ընդ իս՝ — նա ետ ինձ 'ի ծառոյ անտի եւ կերայ . Վէմ զոր անարգեցին շինողքն՝ նա եղեւ գլուխ անկեան . Այդպէս զորս դու ժառանգելոց եա՝ հմայից եւ դիւթութեանց անտառն .

Այս խօսքերուն մէջ —, Ն—, Ն— բառե-րը ուղղագրութեամբ գրուած են .

4 . Նակատութիւն կ'ըսուի այն ձեւը ուր երկու բառ իրարու հետ ոչ բառ քերականական կանոնաց , այլ բառ իմաստին կը համաձայնին . զոր օրինակ՝ բայը յոգնակի կը դրուի , թէեւ ենթակայն եզակի է , բայց հաւաքական , այսինքն յոգնակի իմաստ մը ունենալուն համար , զոր օրինակ՝

Ժողովուրդն որ անդ կային . Իբրեւ տեսին գումարն յուզեցան .

ՁԵՒԱՒՈՐ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆՆԵՐ ՊԱՐԶԵԼ

12 . Նախադասութիւն մը պարզել՝ կը նշանակէ ձեւաւոր նախադասութիւնը քերականական կարգին վերածել՝ եթէ շարքն արտաւղի է . ընդլեայն խճողուած մասերը լրացնել՝ եթէ նախադասութիւնը զեղչեալ է . Իսկ եթէ նախադասութեան մէջ աւելի բառ մը կայ , լուծելու առեն նոյն բառին համար պէտք է ըսել՝ Աւելորդութեամբ գրուած է . Նակատութեան ձեւով համաձայնած բառի մը համար պէտք է ըսել՝ Տէր բայի . ստորոգելի . եայլն . այս ինչ

յօրինակին բային կամ բառին հետ, ըստ իմաս-տին համաձայնած.

## ՁԵՒԱՒՈՐ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆՆԵՐ ՊԱՐԶԵԼՈՒ ԿՐԹՈՒԹԻՒՆՆԵՐ

[illegible]
[illegible]

Ի ծնանելն Յիսուսի 'ի Բեթղեհէմ Հրէաստանի յաւուրս Հերովդի արքայի՝ ահա մոգք յարեւելից եկին յԵրուսաղէմ | եւ ասեն. | Ո՞ւր է | որ ծնաւ արքայն Հրէից, | զի տեսաք զաստղն նորա յարեւելս, | եւ եկաք երկիր պագանել նմա. |

Այս խօսքին մէջ նախադասութիւններն արտաքի են, եւ հետեւեալ կերպով կը պարզուին.

Մոգք եկին ահա յարեւելից յԵրուսաղէմ 'ի ծնանելն Յիսուսի 'ի Բեթղեհէմ Հրէաստանի յաւուրս Հերովդի արքայի, | եւ ասեն. | Ո՞ւր է արքայն Հրէից | որ ծնաւ. | զի մեք տեսաք զաստղն նորա յարեւելս | եւ մեք եկաք առ 'ի պագանել երկիր նմա. |

Երբեւ լուաւ արքայ Հերովդէս, խռովեցաւ. եւ ժողովեալ զամենայն զքահանայապետս եւ զդպիրս ժողովրդեանն՝ հարցանէր 'ի նոցանէ թէ ուր ծնանիցի Քրիստոսն. եւ նոքա ասեն ցնա. 'Ի Բեթղեհէմ Հրէաստանի.

Այս խօսքին մէջ այլ նախադասութիւնները ձեւաւոր են, այսինքն՝ արտաքի եւ զեղչեալ, կայ նաեւ ւ նախդրի աւելադրու-

Թիւն . ուստի Հետեւեալ կերպով կը պարզուի .

Հերովդէս արքայ խռովեցաւ , | իբրեւ լուաւ ... , | եւ ժողովեաց զամենայն քահանայապետս եւ զդպիրս ժողովրդեանն Հրէից . | եւ հարցանէր 'ի նոցանէ | թէ ուր ծնանիցի Քրիստոսն . | եւ նոքա ասեն ցն— . | Ք-է-է—— Ի-Ն—Ն-Ե-Լ-Ց է 'ի Բեթղեհէմ Հը- րէաստանի . |

ՈՒՐԻՇ ՕՐԻՆԱԿ

Բարուոք է արեգակն եւ գեղեցիկ բնութեամբ , եւ մեզ եւ ամենայն արարածոց որ 'ի ներքոյ երկնից' յօգուտ եւ 'ի զարդարանս , իբրեւ ճրագ մի 'ի մեծի տան 'ի մէջ ձեղուան եւ յատակի լուցեալ' առ 'ի զխաւարն եւ զաստուերն զերկուց մեծացն ա- նօթոց 'ի բաց 'ի միջոյ փարատելոյ . բայց ինքն եթէ իցէ եւ եթէ չիցէ' զայն ոչ գիտէ , զի չէ 'ի բանաւորաց եւ 'ի մտաւորաց . նոյնպէս եւ այլքն յանշնչոցն արարածոց .

Նոյն խօսքն այլ որ ձեւաւոր է՝ Հետեւեալ կերպով կը պարզուի .

Արեգակն է բարուոք եւ գեղեցիկ բնութեամբ | եւ Ն— է յօգուտ եւ 'ի զարդարանս մեզ եւ ամենայն արարածոց | որ Ի-Ն —ւ—ր—ւ 'ի ներքոյ երկնից . | Ն— է լուցեալ իբրեւ ճրագ մի 'ի տան մեծի , 'ի մէջ ձեղուան եւ յատակի , առ 'ի փարատելոյ 'ի բաց 'ի միջոյ զխաւարն եւ զաստուեր անօթոյն երկուց մե- ծաց . | բայց ինքն ոչ գիտէ | եթէ իցէ ( գուցէ գոյ ելլալ ) եւ եթէ չիցէ . | զի Ն— ոչ է մի 'ի բանաւո- րաց եւ 'ի մտաւորաց . | եւ այլքն յարարածոց ան- շնչոց Ի-Ն —ւ—ր—ւ նոյնպէս . |

Սովորեան Հայերէն գրաբար լեզուին կազմութիւնը ձեւաւոր է , այսինքն՝ հայերէն խօսքերու կամ նախադասութեանց շարքին մէջ քերականական ձեւերը , մանաւանդ արտուղութիւնն ու զեղչումը յաճախ են . ուստի լաւագոյն է որ տղաք խօսք մը վերլուծելու ատեն՝ նախ նախադասութիւնները զատեն . այսինքն՝ արտուղութիւնը վերջուններն . զեղչումներն ալ լրացուններն . և ապա սկսին վերը ցուցուած կերպով 'վերլուծել :

Փեստոս իբրեւ եհաս յիշխանութիւնն , յետ երից աւուրց ել յԵրուսաղէմ 'ի Կեսարիայ . եւ ըղձացուցին նմա քահանայապետքն եւ գլխաւորք Հրէիցն զՊաւղոսէ . եւ աղաչէին՝ խնդրեալ շնորհս 'ի նմանէ՝ զի կոչեսցէ զնա յԵրուսաղէմ , դարան գործեալ սպանանել զնա 'ի ճանապարհի . Իսկ Փեստոս արար պատասխանի պահել զնա 'ի Կեսարիա , եւ թէ ինքն իսկ ընդ հուպ անդր երթալոց էր . եւ Որ 'ի ձէնջ կարօղքն իցեն , ասէ , ընդ իս իջցեն , եւ թէ իցէ ինչ յառնն վնաս՝ ամբաստան լիցին զնմանէ . Եւ լեալ անդ աւուրս ոչ աւելի քան զութ կամ զտասն , եկն էջ 'ի Կեսարիա . եւ 'ի վաղիւ անդր նստեալ յատենի՝ հրամայեաց ածել զՊաւղոս . Եւ իբրեւ եկն , կացին շուրջ զնովաւ որ յԵրուսաղէմէ իջեալ էին Հրեայքն . բազում եւ ծանր վնաս դնէին , զորս ոչ կարէին ցուցանել , քանզի առնէր պատասխանի Պաւղոս , եթէ ոչ յօրէնս Հրէից , եւ ոչ 'ի տաճարն , եւ ոչ 'ի Կայսր ինչ վնասակար եմ . Բայց Փեստոս կա-

մեցեալ Հրէիցն շնորհս առնել՝ պատասխանի ետ Պաւղոսի եւ ասէ. Կամի՞ս յԵրուսաղէմ ելանել, եւ անդ վասն դոցին իրաց դատել առաջի իմ. Եւ ասէ Պաւղոս. Յատենի Կայսեր հաստեալ կամ, ուր պարտ է ինձ դատել. Հրէից ինչ չեմ վնասակար, որպէս եւ դու իսկ քաջ գիտես. ապա եթէ վը-նասակար եմ՝ եւ արժանի ինչ մահու գործեցի, ոչ զանգիտեմ ՚ի մեռանելոյ. իսկ եթէ ոչինչ են՝ զորոց սոքա ամբաստան լինին զինէն, ոչ ոք կա-րէ զիս դոցա շնորհել. ՚ի Կայսր բողոքեմ. Յայն-ժամ Փեստոսի խօսեցեալ ընդ խորհրդակցին՝ տայր պատասխանի. ՚ի Կայսր բողոքեցեր, առ Կայսր երթիցիր.

Իբրեւ անցին աւուրք ինչ, Ագրիպպաս արքայ եւ Բերենիկէ եկին ՚ի Կեսարիա յողջոյն Փեստոսի. Եւ իբրեւ աւուրս բազումս հանէին անդ, Փես-տոս ցեկոյց արքայի զՊաւղոսէ՝ եւ ասէ. Այր մի է աստ մնացեալ կապեալ ՚ի Փելիքսէ. վասն որոյ իբրեւ չոքայ յԵրուսաղէմ, զգացուցին ինձ քահա-նայապետքն եւ գլխաւորք Հրէիցն. եւ խնդրէին յինէն առնել նմա պատուհաս. որոց ետու պատաս-խանի եթէ Չէ օրէն Հռոմայեցւոց շնորհել ումեք զոք, մինչչեւ ամբաստանելոյն յանդիման ունիցի զդատախազսն, եւ տեղի պատասխանւոյ առնու-ցու վասն ամբաստանութեանն։ Եւ իբրեւ եկին այսր, ոչինչ յապաղեցի, այլ ՚ի վաղիւն նստեալ յատենի՝ հրամայեցի ածել զայրն, վասն որոյ մա-տուցեալ ամբաստանողքն՝ եւ ոչ մի ինչ վնաս չա-րութեան ՚ի մէջ բերէին՝ զորոց ես կարծէի, բայց խնդիրս ինչ որ վասն իւրեանց պաշտաման ունէին ընդ նմա, եւ վասն Յիսուսի ուրումն մեռելոյ,

զորմէ ասէր Պաւղոս թէ կենդանի է ։ Իբրեւ յանհնարս մտի վասն այնպիսի խրաց քննութեան , ասեմ եթէ կամիցի՞ երթալ յԵրուսաղէմ , եւ անդ դատել վասն նոցին խրաց ։ Բայց 'ի Պաւղոսի բողոքելն զի պահեսցի 'ի Քաջի Արամեցն յանդիմանութիւն , հրամայեցի պահել զնա մինչեւ տաց տանել առ Կայսր ։ Ագրիպպաս ցՓեստոս ասէ . կամէի եւ ես լսել առնն . եւ նա ասէ . Ի վաղիւ լըւիցես ։ Եւ 'ի վաղիւ անդր իբրեւ եկն Ագրիպպաս եւ Բերենիկէ բազում եւ երեւելի պատուք , եւ մտին յատեանն հանդերձ հազարապետօքն եւ արամբք պատուաւորօք քաղաքին , հրամայեալ Փեստոսի՝ ածին զՊաւղոս ։ Եւ ասէ Փեստոս . Արքայ Ագրիպպա եւ ամենայն արք որք ընդ մեզ էք , տեսանէ՞ք զսա . վասն սորա ամենայն ժողովք Հըրէից ամբաստան եղեն ինձ յԵրուսաղէմ , եւ աստ աղաղակէին թէ Չէ պարտ դմա կեալ . բայց ես 'ի վերայ հասի թէ ոչինչ է դորա արժանի մահու գործեալ . եւ դորա ինքնին բողոք կալեալ առ Քաջ Արամեցն , խորհեցայ յղել ։ Վասն որոյ ստուգութեամբ ինչ գրել տեառն իմում ոչ ունիմ . վասըն այնորիկ ածի զդա առաջի ձեր , եւ մանաւանդ առաջի քո , արքայ Ագրիպպա , որպէս զի վերատին քննեալ՝ մարթացից ինչ գրել . քանզի անպատեհ իմն թուի ինձ տալ տանել կապեալ մի , եւ ոչինչ զվնաս զնմանէ նշանակել ։

Եւ Ագրիպպաս ասէ ցՊաւղոս . Հրամայեալ է վասն քո խօսել ։ Յայնժամ Պաւղոսի ձգեալ զձեռըն՝ առնէր պատասխանի . Վասն ամենայն ամբաստանութեան Հրէիցն զինէն , արքայ Ագրիպ-

պա, համարիմ զանձն երանելի, զի քո առաջի այսօր տալոց եմ պատասխանի. մանաւանդ զի գիտակ իսկ ես ամենայն կրօնից եւ խնդրոց Հըրէից. վասն որոյ աղաչեմ երկայնմտութեամբ լսել ինձ. Քանզի կենաց իմոց որ 'ի մանկութենէ, իւկզբանէ լեալ յազգի անդ իմում յԵրուսաղէմ, տեղեակ են ամենայն Հրեայք. Յառաջագոյն գիտեն 'ի վաղուց հետէ, եթէ կամիցին վկայել, զի ըստ ճշմարտագոյն կրօնից օրինացն մերոց կեցեալ եմ փարիսեցի. Եւ արդ վասն յուսոյն առ հարսն եղելոյ աւետեացն յԱստուծոյ՝ դատել կամ յատենի. յոր երկոտասան ազգատոհմին մերոց անպակաս ցայգ եւ ցերեկ պաշտել ակն ունէին հասանել. վասն որոյ յուսոյ ամբաստանիմ, արքայ, 'ի Հրէից. Զի՞նչ անհաւատ թուի ձեզ, եթէ Աստուած զմեռեալս յարուցանէ. Ես իսկ ինքնին պատշաճ համարէի զբաղում ինչ հակառակ անուանն Յիսուսի Նազովրեցւոյ գործել. զոր եւ արարի իսկ յԵրուսաղէմ. եւ զբազումս 'ի սրբոցն ես բանտարգել առնէի 'ի քահանայապետիցն առեալ իշխանութիւն, եւ զսպանելոցն նոցա բերէի համար. Եւ ըստ ամենայն ժողովրդոցն բազում անգամ պատժեալ զնոսա՝ բռնադատէի հայհոյել, առաւել եւս մոլեալ 'ի վերայ նոցա՝ հալածէի մինչեւ յարտաքին քաղաքսն. Որովք գնացեալ 'ի Դամասկոս՝ իշխանութեամբ եւ հրամանաւ քահանայապետիցն, զմիջաւուրբն 'ի ճանապարհի տեսի, արքայ, յերկնից առաւել քան զլուսաւորութիւն արեգական ծագեալ զինեւ լոյս եւ զնովք որ ընդ իմն երթային. եւ յամենեցուն մեր անկանելն յերկիր՝ լուայ ձայն որ ասէր ցիս Հեբրայեցւոյ բար-

*բառոյն · Սաւուղ Սաւուղ , զի՞ հալածես զիս . խիստ է քեզ ընդդէմ խթանի աքացել ։ Եւ ես ասեմ · Ո՞ ես տէր ։ Եւ տէր ասէ · Ես եմ Յիսուս զոր դու հալածես · այլ արի եւ կաց 'ի վերայ ոտից քոց · զի վասն այսորիկ երեւեցայ քեզ՝ առնուլ զքեզ 'ի ձեռն պաշտօնեայ եւ վկայ որոց տեսեր , եւ որով երեւեցայ քեզ · փրկել զքեզ 'ի ժողովրդենէդ եւ 'ի հեթանոսաց՝ յորս ես առաքեցից զքեզ բանալ զաչս նոցա , դարձուցանել 'ի խաւարէ՝ 'ի լոյս , եւ յիշխանութենէ սատանայի՝ յԱստուած , առնուլ նոցա զթողութիւն մեղաց , եւ վիճակ ընդ սուրբս հաւատովքն որ յիս ։ Ուստի , արքայ Ագրիպպա , ոչ եղէ անհաւան երկնաւոր տեսլեանն · այլ նախ որոց 'ի Դամասկոս եւ յԵրուսաղէմ էին , եւ ընդ ամենայն գաւառն Հրէաստանի եւ 'ի հեթանոսս պատմեցի ապաշխարել եւ դառնալ յԱստուած կենդանի , արժանի ապաշխարութեան գործս գործել ։ Վասն այսորիկ Հրէից կալեալ զիս 'ի տաճարին՝ կամէին սպանանել · օգնութիւն հասեալ առ 'ի յԱստուծոյ՝ մինչեւ ցայսօր կացի վկայել փոքու եւ մեծի , ոչինչ արտաքոյ ասել քան զոր մարգարէքն եւ Մովսէս խօսեցան վասն հանդերձելոցն լինելոյ · եթէ չարչարելոց է Քրիստոս , եթէ առաջին 'ի յարութենէ մեռելոց լոյս պատմելոց է ժողովրդեանն եւ հեթանոսաց ։ Եւ նորա զայս պատասխանի տուեալ , Փեստոս 'ի ձայն մեծ ասէ · Մոլիս Պաւղէ , բազում դպրութիւնք զքեզ 'ի մոլութիւն դարձուցանեն ։ Իսկ Պաւղոս ասէ · Ոչ մոլիմ , քաջդ Փեստոս , այլ զգաստութեան եւ զճշմարտութեան բանս բարբառիմ ։ Գիտակ իսկ է այսորիկ արքայ ընդ*

որում համարձակեալդ խօսիմ. քանզի ծածկել 'ի քէն իմիք 'ի սոցանէ չառնում յանձն. զի ոչ եթէ յանկեան ուրեք գործեալ իցէ այս: Հաւատա՞ս, արքայ Ագրիպպա, մարգարէից. գիտեմ զի հաւատաս: Եւ ասէ Ագրիպպաս ցՊաւղոս. Փոքու իմն հաւանեցուցանես զիս լինել քրիստոնեայ: Եւ Պաւղոս ասէ. Մաղթէի յԱստուծոյ եւ փոքու եւ մեծաւ՝ ոչ միայն զքեզ՝ այլ զամենեսեան որ լսեն ինձ այսօր, լինել այսպիսի որպէս եւ ես եմ, բաց 'ի կապանաց աստի: Յոտն եկաց արքայն, դատաւորն եւ Բերենիկէ եւ որք ընդ նոսայն նստէին Եւ իբրեւ գնացին, խօսէին ընդ միմեանս եւ ասէին թէ՝ Ոչինչ արժանի մահու կամ կապանաց գործէ այրս այս: Իսկ Ագրիպպաս ցՓեստոս ասէ. Արձակել մարթ էր զայրս զայս, եթէ ոչ էր բողոքեալ 'ի Կայսր:

Իբրեւ հրամայեցաւ մեզ նաւել յԻտալիա, տային զՊաւղոս եւ զայլս ոմանս կապեալս ցհարիւրապետ մի որում անուն էր Յուլիոս, 'ի Սեբաստական գնդէ: Եւ ելեալ 'ի նաւ մի Ադրամիտտացի որ երթալոց էր 'ի կողմանս Ասիացւոց՝ գնացաք. էր ընդ մեզ եւ Արիստարքոս Մակեդոն Թեսաղոնիկեցի: Եւ 'ի վաղիւ անդր իջաք 'ի Սիդոն. եւ մարդասիրութեան ցուցեալ Յուլեայ առ Պաւղոս՝ հրամայեաց առ բարեկամսն երթալ եւ դարմանս գտանել: Եւ անտի ելեալ՝ խոնարհագոյն նաւեցաք 'ի Կիպրոս վասն հողմոցն ընդդէմ լինելոյ: Յայնժամ ընդ մէջ ծովուն Կիւլիկեայ եւ Պամփիլեայ նաւեալ՝ իջաք 'ի Միւռայ Լիկիացւոց: Եւ անդ գտեալ հարիւրապետին նաւ մի Աղեքսանդ-

բայց որ երթայր յԻտալիա՝ եմուտ զմիղ անդր ․ Եւ 'ի քաղաքն աւուրս ծանրանառնելոյք հայրն հա-ւատք առ Անիւգեա ․ Եւ 'ի չթողացուցանել մեզ հողմոյն՝ նաւեցաք խոնարհագոյն 'ի Կրետէ առ Սաղմինեաւ ․ հազիւ անցեալ առ նովաւ՝ եկաք 'ի տեղի մինչ որ կոչէր Գեղեցիկ նաւահանգիստ, յոր հուպ էր քաղաքն Ղասեայ ․ Եւ իբրեւ բազում ժամանակք անցանէին, եւ սխալ եւս լինէր նաւե-լոյն, եւ վասն այն մինչ եւս պահոցն անցանելոյ, տայր խրատ Պաւղոս եւ ասէր ցնոսա ․ Արք, տե-սանեմ թէ թշնամանօք եւ բազում վնասու՝ ոչ միայն բեռինդ եւ նաւիդ՝ այլ եւ անձանց մերոց լինելոց է նաւարկութիւնս ․ Իսկ հարիւրապետն նաւապետին եւ նաւատիրոջն առաւել անսայր քան բանիցն Պաւղոսի ․ Իբրեւ դժպատեհ ինն թուէր նաւահանգիստն առ ձմերել, բազումք խորհեցան զնալ անտի ․ թերեւս կարասցեն հասանել 'ի Փիւ-նիկէ, ձմերել 'ի նաւահանգստին Կրետացւոց ․ որ հայէր ընդ հարաւակողմ եւ ընդ աշխարհն ․ Եւ 'ի շնչել հարաւոյն՝ համարեցան ուր զկամսն էին հա-սանել ․ եւ արկեալ՝ մօտ անցանէին առ Կրետեաւ ․ Եւ ոչ յետ բազում ժամուց անկաւ զնովաւ հողմ տաւուցիկ որ կոչի Եւրակիւղոն ․ Ընդ յափշտակել նաւին եւ 'ի չհանդուրժել ընդդէմ հողմոյն՝ թոյլ տուեալ երթայաք եւ գայաք ․ Ի կղզի մինչ զիմեալ՝ որ կոչէր Կղաւդա, հազիւ կարացաք ըմբռնել ըզ մակոյկն, զոր առեալ յօգնականութիւն՝ կապէին ընդ նաւն ․ երկուցեալք թէ գուցէ 'ի յորձանուտն անկանիցին, իջուցեալ զառագաստն՝ այնպէս եր-թային եւ գային ․ Եւ 'ի սաստկագոյն վշտանալոյն մերոյ՝ 'ի վաղիւ անդր զկարասին ընկեցիկ առնէին.

եւ յերիր աւուր ընդ խուռանց ձեռն զգործին նաւին ընկեցին ։ Երբեւ ոչ արեւ եւ ոչ աստեղք երեւէին 'ի բազում աւուրս , եւ ձմեռն ոչ սակաւ կայր 'ի վերայ , ապա բարձեալ ամենայն յոյս փրկութեան մերոյ ։ Եւ զի բազում աւուրս նօթի էին , յայնժամ Պաւղոս կացեալ 'ի մէջ նոցա ասէ ․ Պարտ էր ձեզ , ո՛վ արք , անսալ ինձ , եւ ոչ ելանել 'ի Կրետեայ եւ շահել զվնասս զայս եւ զվնաս ։ Եւ արդ խրատեմ զձեզ քաջալերել , զի վնաս անձին եւ ոչ միում 'ի ձէնջ լինիցի , բաց 'ի նաւէդ ։ Քանզի երեւեցաւ ինձ յայսմ գիշերի հրեշտակ Աստուծոյ որոյ եմն եմ եւ պաշտեմ զնա , եւ ասէ ․ Մի երկնչիր , Պաւղէ , Կայսեր եւս քեզ պարտ է յանդիման լինել ․ եւ ահա շնորհեալ է քեզ Աստուծոյ զամենեսեան որ են ընդ քեզ 'ի նաւիդ ։ Վասն այսորիկ քաջալերեցարուք , արք , զի հաւատամ յԱստուած եթէ այսպէս լինի , զորօրինակ խօսեցաւ ընդ իս ․ բայց 'ի կղզի ինչ հասանել մեզ անկանել ։ Երբեւ չորեքտասաներորդ գիշեր լինէր , մինչդեռ ծփէաք 'ի Ադրիան անդունդս , 'ի մէջ գիշերին կարծէին նաւավարքն եթէ հասանեն իցեն յաշխարհ ուրեք ․ եւ ընկեցեալ զզունդսն՝ գտին գիրկս քսան ․ եւ սակաւ ինչ զագարեալ՝ դարձեալ ընկեցին , եւ գտին գիրկս հնգետասան ։ Զահի հարեալ թէ գուցէ 'ի խիստ ինչ տեղիս անկանիցին՝ յետուստ կողմանէ ընկեցին խարիսխս չորս ․ ըղձանային այգուն լինելոյ ։ Բայց նաւավարքն խնդրէին փախչել 'ի նաւէ անտի ․ եւ իջուցեալ զկուրն 'ի ծով անդր՝ պատճառանօք որպէս թէ առաջոյ կողմանէ զխարիսխն ձգելոց իցեն , ասէ Պաւղոս ցհարիւրապետն եւ

ցօրականն. Եթէ ոչ դոքա մնան 'ի նաւին՝ դուք ապրել ոչ կարէք։ Յայնժամ զօրականքն հատին զլարս կրին, և 'ի բաց ընկեցին։ Եւ մինչդեռ այգն կամէր լինել, աղաչէր Պաւղոս զամենեսեան առնուլ կերակուր, ասէ. Այս չորեքտասաներորդ օր է՝ որում ակն ունիք նօթիս կատարել, և չէ ինչ ճաշակեալ. վասն որոյ աղաչեմ զձեզ ճաշակել կերակուր՝, զի այն իսկ վասն ձերոյ փրկութեան է. զի ոչ ուրուք 'ի ձէնջ մազ մի 'ի գլխոյ կորիցէ։ Եւ իբրև ասաց զայս, առեալ հաց՝ գոհացաւ զԱստուծոյ առաջի ամենեցուն, եբեկ և սկսաւ ուտել։ Եւ քաջալերեցան ամենեքին, և նոքա առին կերակուր. և էաք ամենայն հոգիք 'ի նաւին երկերիւր եօթանասուն և վեց։ Իբրև յագեցան կերակրոյն, թեթևացուցին զնաւն՝ թափեեալ զցորեանն 'ի ծով։ Եւ իբրև այգ եղև, զերկիրն ոչ ճանաչէին, բայց զգոգ մի նշմարէին թէ ափն ծովուն իցէ. յոր խորհէին, թէ հնար ինչ իցէ, զերծանել զնաւն։ Եւ զխարիսխն հատանեալ ընկեցին 'ի ծովն, թուլացուցին զխառնելիս թեւոցն, և 'ի բաց առին զառագաստն, և եառն հողմոյն յափն կոյս ծովուն։ Անկեալ 'ի տեղի մի երկծով թիւրեցին զնաւն. և առաջին կողմն նաւին խրեալ անշարժ մնայր, և յետին կողմն քակէր 'ի բռնութենէն։ Եւ զօրականացն խորհուրդ արարեալ զի զկապեալսն սպանցեն, և զի մի ոք լողիցի և փախիցէ, հարիւրապետն՝ քանզի կամեցաւ ապրեցուցանել զՊաւղոս՝ արգել զնոսա 'ի խորհրդոյն. հրամայեաց զի որ կարողն իցեն լողել՝ անկանիցին նախ և 'ի ցամաքն ելանիցեն. և այլքն 'ի տախտակս և յայլ ինչ կահ 'ի նաւէ

անտի · եւ այսպէս եղեւ ամենեցուն փրծանել յերկիր ։

Յայնժամ գիտացաք եթէ Մելքիսեդէկ էր անուն կղզւոյն ։ Բայց բարբարոսքն չնորհեցին ոչ սակաւ մարդասիրութիւն մեզ , քանզի լուցին խարոյկ եւ ընկալան զամենեսեան զմեզ վասն անձրեւին որ առկայէր եւ վասն ցրտոյն ։ Եւ 'ի ժողովել Պաւղոսի խառն ինչ բազում եւ դնել 'ի վերայ խարոյկին՝ իժ մի 'ի ջերմութենէն ելեալ կալաւ զձեռանէ նորա ։ Եւ իբրեւ տեսին բարբարոսքն կախեալ զգազանն զձեռանէ նորա , ասէին ընդմիմեանս · Արդեամբ սպանող է այրս այս , որ թէպէտ ապրեցաւ 'ի ծովէն , իրաւունքն ոչ եթողին կեալ ։ Եւ նորա թօթափեալ զգազանն 'ի հուրն՝ եղեւ նմա չար եւ ոչինչ · եւ նոքա ակն ունէին նմա այտնելոյ իբրեւ շատ ակն կալեալ , եւ տեսանէին թէ ոչինչ վնաս եղեւ նմա , դարձեալ դարձուցին զբանսն , եւ ասէին թէ՝ Աստուած ոմն է ։ Եւ շուրջ զտեղեաւն գայնուիկ էին գիւղք դլխաւորի կղզւոյն որում անուն էր Պոպղիոս , որ առ զմեզ յերաշխի գերիս աւուրս եւ սիրով ընկալաւ ։ Եւ եղեւ հօրն Պոպղեայ 'ի ջերմ եւ յախտ թանչից հիւանդանալ դնել · առ որ մտեալ Պաւղոս եւ կացեալ յաղօթս՝ եդ ձեռն եւ բժշկեաց զնա ։ Իբրեւ այս եղեւ , այլ հիւանդք որ էին 'ի կղզւոջն՝ գային եւ բժշկէին որք եւ բազում պատուով պատուեցին զմեզ · եւ իբրեւ գնացաք , եդուն որ ինչ պէտք էին ։

Եւ յետ երից ամսոց ելաք 'ի նաւ մի Աղեքսանդրացի որ ձմերեալ էր 'ի կղզւոջն նշանաւո-

րաւ Դիոսկորացւոց ։ Եւ իջեալ 'ի Սիւրակուսա՝ եղեալ աւուրս երկուս , ուստի գնացեալ հասաք 'ի Հռեգիոն ։ Եւ յետ աւուր միոյ 'ի շնչել հարաւոյն , երկօրեայք եկաք 'ի Պոտիողոս , ուր եւ գտաք եղբարս ։ Աղաչեցեալք 'ի նոցանէ լինել աւուրս եւթն , եւ ապա եկաք 'ի Հռոմ ։ Եւ անտի լուեալ եղբարց զմէնջ՝ ելին ընդ առաջ մեր մինչեւ յորդառայն Ապփեայ եւ երիցն կրպակաց ։ զորս տեսեալ Պաւղոսի գոհացաւ զԱստուծոյ եւ քաջալերեցաւ ։ Եւ իբրեւ մտաք 'ի Հռոմ , հրրամայեցաւ Պաւղոսի լինել առանձինն հանդերձ զինուորաւն՝ պահապանաւ իւրով ։

## Դ. ՄԱՍՆ

## ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄ .

Տղաք նախընթաց մասին մէջ սորվեցան նախադասութիւնները լուծել՝ անոնց մէջ գտնուած բառերուն պաշտօնները ցուցունելով . այսպէս ընելով նախադասութեանց կազմութիւնը ճանչնալ սորվեցան ։ Բայց լեզուն աղէկ վերլուծել գիտնալու համար առանձին առանձին նախադասութեանց կազմութիւնը ճանչնալ բաւական չէ , պէտք է նաև ճանչնալ խօսքին կազմութիւնը , խօսքը թէ կարճ պարբերութիւն մը ըլլայ և թէ երկայնկեկ գրուած մը ։ Աղէկ գրու-

*թեան մը մէջ ոչ միայն իւրաքանչիւր նախադասութեան բառերն իրարու հետ ներքին յարաբերութիւն կամ կապ մը ունենալու են, ապա թէ ոչ նախադասութիւնը սխալ կամ անիմաստ կ՚ըլլայ․ հապա նաև նախադասութիւններ՝ պարբերութեան մէջ, պարբերութիւններն ալ բոլոր գրութեան մէջ իրարու հետ յարաբերութիւն և կապ ունենալու են ։ Գրուած մը որչափ աւելի աս յատկութիւնն ունի, այսինքն՝ անոր մէջ նախադասութիւններն ու պարբերութիւններն իրարու հետ որչափ աւելի կապուած են, կամ իրարմէ կը բխեն, գըրուածն այնչափ աղէկ է ։*

*Ուստի գրուածքի մը աս յատկութիւնն ունենալը ճանչնալու, և գրութեան միտքըն աղէկ իմանալու համար՝ անիկա տըրամաբանօրէն լուծել գիտնալ հարկաւոր է ։*

ԳԻՏԵԼԻՔ ․

1 ․ *Տրամաբանութիւնը նախադասութեան մէջ երեք բան միայն կը նկատէ․* Ենթակայ *որ տէր բային է,* Ստորոգելի *և* Կապ *որ* Էական *բայն է ։* Տղաք *արդէն գիտեն որ* Ածական *բայերու մէջ ստորոգելին ու* Էական *բայը միացած են, ուստի և* Սիրեմ՝ *սիրող եմ, ըսել է ։*

2 ․ *Տրամաբանութիւնը նախադասու-*

թեան մը մէջ գտնուած ուրիշ մասեր, զոր օրինակ՝ ածական, սեռի խնդիր, բնութեան կամ նախադրութեամբ խնդիրներ, յատկացուցիչ, բացայայտիչ, առանց ամէնը՝ Ենթակային կամ Ստորոգելոյն հետ իբր մէկ կը համարի։ Զոր օրինակ՝ սա նախադասութիւնը՝ Դաւիթ մարգարէ եւ թագաւոր Իսրայէլ՝ եղեւ այր ըստ սրտին Աստուծոյ, արհամարհանօրէն այսպէս կը լուծուի. Եղեւ՝ բայ. Դաւիթ մարգարէ եւ թագաւոր Իսրայէլ՝ ենթակայ, այր ըստ սրտին Աստուծոյ՝ ստորոգելի։ Ուստի

3. Նախադասութեան մը երկու եզրները*, այսինքն՝ Ենթական եւ Ստորոգելին, կրնան ըլլալ՝ Պարզ կամ Բաղադրեալ, Մերկ կամ Բազմաման։

Ենթական Պարզ է, երբ մէկ բառ է. զոր օրինակ՝ Պետրոս ելանէր։ Ենթական Բաղադրեալ է, երբ երկու կամ աւելի բառ է, զոր օրինակ՝ Պետրոս եւ Յովհաննէս ելանէին։

Ենթական Մերկ է, երբ յաւելուած մը, այսինքն՝ ածական կամ խնդիր կամ բացայայտիչ կամ միջանկեալ նախադասութիւն մը չունի, ինչպէս էր վերի օրինակներուն

* Նախադասութեան մը Ենթական եւ Ստորոգելին տրամաբանութեան մէջ Եզր կը կոչուին։

նախադասութիւն մը ։

4 ·Նախադասութիւնները երկու տեսակ են . Գլխաւոր և Երկրորդական կամ Միջանկեալ·

Խօսքի մը մէջ գլխաւոր նախադասութիւնն է՝ որուն հետ կապուած է ուրիշ նախադասութիւն մը որ երկրորդական կամ միջանկեալ է , ինչպէս հետեւեալ խօսքերուն մէջ .

Մինչ Մենտոր եւ Ադամէլ կը խօսէին , ոսկեգոյն եւ կապոյտ թեփերով ծածկուած դլփիններ տեսանք ։

Եթէ սոխակն անտառաց երգիչն է , դեղձանիկը խուցերուն երաժիշտն է ։

Երբ մեր բարեկամներուն մեր վրայ ունեցած սէրը չափազանց կը գտնենք , ոչ այնչափ մեր շնորհակալութիւնը որչափ մեր արգիւնքը հաշակել կ'ուզենք ։

Թէպէտ սա խօսքին խորին իմաստութիւնը չէի հասկնար , բայց եւ այնպէս անոր մէջ մաքրութիւն եւ վսեմութիւն մը կը զգայի ։

Որովհետեւ յոյս չունինք որ մեր վրայ թագաւորէք , գէթ մեր օրէնքները հաստատուն պահել տալու կարող թագաւոր մը գտնելու մեզի օգնեցէք ։

Անձնասիրութեան աշխարհին մէջ որչափ նոր տեղեր գտնենք , տակաւին շատ անծանօթ երկիրներ կը մնան ։

Բան մը չգիտնալն ամօթ չէ , այլ սորվիլ չուզելն է ամօթ ։

Աստուած անսահման կատարեալ եւ անհուն բարի է․ ապա ոչ կրնայ խաբուիլ ոչ ալ մեզ կը խաբէ։

Սա օրինակներուն մէջ նախադասութեանց մէկը գլխաւոր է, միւսը Երկրորդական կամ Միջանկեալ է, որ գլխաւոր նախադասութեան հետ կապուած է․ զոր օրինակ՝ առջին խօսքին մէջ․ Աստուած եւ կատարեալ անհուն բարի է գլխաւոր է․ իսկ Ապա ոչ կրնայ խաբուիլ երկրորդական է։

5 · Խօսքի մը մէջ կրնան գտնուիլ երկու կամ քանի մը գլխաւոր նախադասութիւններ որոնք իմաստով միայն իրարու հետ կապուած են առանց շաղկապի, կամ միայն եւ շաղկապն ունին։ Այսպէս են հետեւեալ խօսքերը․

Տեսանք որ առողջութիւնը լոկ անուն է, կեանքը սակաւ երազ է, փառքը երեւոյթ մըն է, զուարճութիւններն ու հեշտութիւններն ուրիշ բան չեն բայց վտանգաւոր զբօսանք։

Սպառնալիք կ՚ըլլան, մարդիկ կը սարսափին, օդը կը հնչէ, սուրը կը շողայ։

Մարդ կ՚առաջարկէ եւ Աստուած կը յաջողէ։

6 · Երկրորդական կամ Միջանկեալ նախադասութիւնները երկու տեսակ են․ Անուանական միջանկեալ եւ Ընդհանուր միջանկեալ։

7. Մասնաւոր միջանկեալ նախադասութիւնն այն է որ յարաբերական դերանուամբ կը կապուի ուրիշ նախադասութեան մը ենթակային կամ ստորոգելոյն հետ, և անոր ածականի պէս է, այսինքն՝ ան բառին մէկ որպիսութիւնը կամ պարագան կը ցուցնէ ։ Զոր օրինակ.

Աստուածային մեծագործութեան առաջին գահն է բնութիւնը · այն մարդն որ զայն ճանաչէ և խելամուտ է՝ տակաւ ամենակարողութեան ներքին գահը կ'ամբառնայ ։

Աս խօսքին մէջ նոր գրով նշանակուած նախադասութիւնը որ որ յարաբերականով մարդ բառին հետ կապուած է և անոր մէկ որպիսութիւնը կը ցուցնէ՝ մասնաւոր միջանկեալ նախադասութիւն է ։

Աստուած միայն անցեալը, ներկան եւ ապագան գիտէ · նա ամէն ժամանակուան է · մարդս, որուն պատմութիւնը քանի մը վայրկեան է, այն վայրկեանները միայն գիտէ ։

Հոս ալ նոր գրով նախադասութիւնը մասնաւոր միջանկեալ է ։

8. Ընդհանուր միջանկեալ կամ մանաւանդ երկրորդական կ'ըսուի ան նախադասութիւնը որ և շաղկապէն զատ ուրիշ շաղկապով մը գլխաւոր նախադասութեան հետ կապուած է, ինչպէս են վերը (թիւ 4) յառաջ բերուած խօսքերուն մէջ երկրոր-

դական նախադասութիւնները ։

9 · Երկրորդական նախադասութիւնը կրնայ գլխաւորէն առաջ ալ դրուիլ · և շատ անգամ այսպէս կ՚ըլլայ · ինչպէս վերի (Թիւ 4) օրինակներէն յայտնի է ·

10 · Երբ խօսք մը գլխաւոր և երկրորդական նախադասութենէ մը բաղկացած է, Պարբերութիւն կը կոչուի · և գլխաւոր ու երկրորդական նախադասութիւնները պարբերութեան անդամները կ՚ըսուին · զոր օրինակ ·

Երբ մեր բարեկամներուն մեր վրայ ունեցած սէրը չափազանց կը գովենք, ոչ այնչափ մեր շնորհակալութիւնը՝ որչափ մեր արդիւնքը կ՚ուզենք հռչակել ։

Այս խօսքը պարբերութիւն մըն է, և երկու անդամ ունի ։

11 · Գլխաւոր և երկրորդական նախադասութիւններէ բաղկացեալ խօսք մը պարբերութիւն է

Նախ՝ երբ խօսքին երկու անդամներն իրարմէ կախում ունին · և սա կախումը շաղկապով մը կը բացատրուի · այնպէս որ եթէ այն շաղկապը վերցնես · խօսքին մասերուն իրարմէ կախումը կամ իրարու հետ կապակցութիւնը չի հասկցուիր ։ Այսպէս են վերը (Թիւ 4) յառաջ բերուած խօսքերը ։

*Երկրորդ՝ խօսք մը պարբերութիւն է . երբ անիկա բաղադրող նախադասութիւնները իրարու հակադրեալ իմաստ կը պարունակեն . զոր օրինակ .*

*Երջանկութեան հասնելու համար բոլոր մարդիկ հարստութիւն կը փնտռեն . բայց եւ այնպէս երջանիկ հարուստներ շատ քիչ կը գտնուին .*

*Երրորդ՝ խօսք մը պարբերութիւն է , երբ անիկա բաղադրող նախադասութիւններուն մէկը միւսին պատճառ է . զոր օրինակ .*

*Աստուած անսահման կատարեալ եւ անհուն բարի է . ասոր համար ոչ կրնայ խաբուիլ , ոչ ալ կրնայ խաբել .*

*Մեր թագաւորին գթութեանը կրնանք ապաւինիլ , քանզի բարի եւ մարդասէր է .*

*Կախումցուցնող շաղկապներն են՝* եթէ, յորժամ, իբրեւ, մինչ, մինչդեռ, այնչափ . . . որչափ, որպէս . . . նոյնպէս, թէպէտեւ, *եւ ուրիշ ասոնց նման շաղկապներ .*

*Հակադրութիւն ցուցնող շաղկապներն են՝* բայց, այլ, սակայն .

*Պատճառ կամ փաստ , արդիւնք կամ հետեւութիւն ցուցնող շաղկապներն են՝* քանզի, զի, որովհետեւ, ապա ուրեմն .

12. *Պարբերութեան մը անդամները կրնան* պարզ *եւ* բաղադրեալ *ըլլալ .* Պարզ *կ'ըսուի պարբերութեան մը անդամը , երբ մէկ նախա-*

դասութի՛ւնն է ․ ինչպէս էին վերի օրինակները ։

Բաղադրեալ կ՚ըսուի պարբերութեան անդամը ․ երբ երկու ․ կամ երբեմն աւելի նախադասութիւններէ կը բաղկանայ ․ զոր օրինակ հետեւեալ խօսքը ․

Մարդ իրեն հետ համամիտ եւ համակիր եղողներուն հետ երկայն ատեն գժտեալ չի կրնար մնալ , վերջապէս կը հաշտուի ․ բայց իր զգացմանն ու կարծեացը հակառակ եղողներուն հետ սէր եւ միաբանութիւն ունենալու վայրապար կ՚աշխատի , անանկները կանուխ կամ անագան իրարմէ կը բաժնուին ։

13 ․ Խօսք մը տրամաբանօրէն լուծելու մէջ երկու բան կայ ․

1 ․ Իւրաքանչիւր նախադասութեան մէջ ենթական և ստորոգելին ցուցնել ։

2 ․ Պէտք է նախադասութեանց ընութիւնն ու իրարու հետ ունեցած կապակցութիւնը յայտնել ։

## 1 ․ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԵԱՆՑ ԵՆԹԱԿԱՆ ԵՒ ՍՏՈՐՈԳԵԼԻՆ ՑՈՒՑՆԵԼ

Նախադասութեանց մէջ ենթական և ստորոգելին ցուցնելու համար պէտք է նախ՝ խօսքին մէջ նախադասութիւնները զատել , և ապա իւրաքանչիւր նախադա-

ութեան ենթական և ստորոգելին ցուցանել՝ իմացնելով թէ սոնք պարզ են թէ բաղադրեալ․ կամ թէ բազմամասն ։

ՕՐԻՆԱԿ ․

Յածել խոհում զայսոսիկ զմտաւ՝ մտանէի յանտառ ուրեք մթին, | ուր երեւէր ինձ յանկարծ ծերունի մի | որ ունէր մատեան ՚ի ձեռին ։ | Ճակատ նորա էր լայն եւ կունտ, զոյգն ինչ խորշոմեալ ․ | ունէր մօրուս սպիտակս | որ իջանէր մինչեւ ցգօտին ․ | եւ էր նա բարձրանձն, սէգ գնացիւք, կարմրայտ, գունեղ, ծաւի, քաջատես, քաղցրաձայն, պարզախօս եւ բարեբարոյ ։ | Տէրմոսիրիս էր անուն նորա, | եւ էր նա քուրմ Ապողոնի | զոր պաշտէր ՚ի կենայ մեհենին նուիրելոյ նմա ՚ի Թագաւորաց Եգիպտացւոց յանտառի անդ ։ | Մատեանն | զոր ՚ի ձեռին ունէր՝ | էր քաղուածոյ երգոց յօրինելոց ՚ի պատիւ դիցն այնորիկ ։ |

1․ Յածել խոհում զայսոսիկ զմտաւ՝ մտանէի( էի մտանող ) յանտառ ուրեք մթին ․

Էէ ․ Բայ ․

Էօ ․ Ենթակայ որ լռելեայն կ՚իմացուի ․ պարզ եւ լոկ, քանզի մի է եւ յաւելուած ( ածական, խնդիր, եւն ) չունի ։

մտանող ․ Ստորոգելի պարզ՝ քանզի մէկ բառ է ․ բայց բազմամասն՝ քանզի ունի յաւելուածներ որ են՝ յանտառ ուրեք ․

[illegible] որ ՚ի Նախադրութեամբ խըն-
դիր է եւ տեղւոյ պարագան կը ցու-
ցունէ, այսինքն՝ [illegible] մասնըը գործ-
եալ ուրիշ ՚ի Նախադրութեամբ խըն-
դիր մը՝ [illegible] [illegible] [illegible] [illegible],
որ ժամանակի պարագան կը ցու-
ցունէ, այսինքն՝ [illegible] մասնըը ։

2. Ուր երեւէր (էր երեւող) ինձ յանկարծ ծերունի մի ·

[illegible] · Բայ ·

[illegible] · Ենթակայ պարզ՝ քանզի մէկ բառ է · բայց բազմամասն՝ քանզի ունի մէ ածականը ·

[illegible], Ստորոգելի պարզ՝ քանզի մէկ բառ է · բայց բազմամասն՝ քանզի ունի յաւելուած, այսինքն՝ [illegible] տրական խնդիրը [illegible] եւ [illegible] մակբայները որոնց առաջինը երեւնալուն եղանակը կը ցուցունէ, երկրորդը՝ տեղը ։

3. Որ ունէր (էր ունող) մատեան ՚ի ձեռին ·

[illegible] · Բայ ·

[illegible] · Ենթակայ պարզ եւ լոկ՝ քանզի մէկ բառ է եւ յաւելուած չունի ։

[illegible] · Ստորոգելի պարզ՝ քանզի մէկ բառ է, բայց ՚բազմամասն՝ քանզի ունի յաւելուած, այսինքն՝ [illegible] սեռի խնդիրը, եւ ՚ի [illegible] Նախադրութեամբ խնդիրը որ տեղւոյ պարա-գան կը ցուցունէ՝, այսինքն՝ մատեանն [illegible] ունենալը ։

4 · Ճակատ նորա լայն էր եւ կնճռոտ, դոյն ինչ խորշոմեալ ·

Էր · Բայ ·

Ճակատ · Ենթակայ պարզ՝ քանզի մէկ բառ է, բայց բազմամասն՝ քանզի ունի յաւելուած նորա յատկացուցիչը ·

Լայն, կնճռոտ, խորշոմեալ · Ստորոգելի են, բաղադրեալ՝ քանզի մէկէ աւելի են · երկու առաջինները լոկ՝ քանզի յաւելուած չունին, վերջինը բազմամասն՝ քանզի յաւելուած ունի դոյն ինչ մակբայը որ չափ կը ցուցանէ, այսինքն՝ որչափ խորշոմեալ ըլլալը ·

5 · Ունէր (էր ունող) մօրուս սպիտակ ·

Էր · Բայ ·

Նա · Ենթակայ որ յանկեայն կ'իմացուի · պարզ է եւ լոկ · քանզի մէկ բառ է եւ յաւելուած չունի ·

Ունող · Ստորոգելի պարզ՝ քանզի մէկ բառ է · բայց բազմամասն՝ քանզի յաւելուած ունի մօրուս սպիտակ սեռի խնդիրը ·

6 · Որ իջանէր (էր իջանող) մինչեւ ցգօտին ·

Էր · Բայ ·

Որ · Ենթակայ պարզ եւ լոկ՝ քանզի մէկ բառ է եւ յաւելուած չունի ·

Իջանող · Ստորոգելի պարզ՝ քանզի մէկ բառ է · բայց բազմամասն՝ քանզի յաւելուած ունի · այսինքն՝ մինչեւ ցգօտին

նախադրութեամբ խնդիրը որ տեղ-
ւոյ պարագան կը ցուցանէ , այ-
սինքն՝ մինչեւ ուր իշխելը ·

7 · Էր նա բարձրանձն , սէգ գնացիւք , կար-միրայտ , գունեղ , ծաւի , քաջատես , քաղցրաձայն , պարզախօս եւ բարեբարոյ ·

Էր · Բայ ·

Նա · Ենթակայ պարզ եւ լոկ՝ քանզի մէկ բառ է եւ յաւելուած չունի ·

Բարձրանձն , սէգ գնացիւք եւն . Ստորոգելի են . բաղադրեալ՝ քանզի մէկէ աւելի են . լոկ են՝ քանզի յաւելուած չունին . երկրորդը միայն , սէգ գնացիւք , բազմամասն է , քանզի յաւելուած ունի գնացիւք գործիական խնդիրը ·

8 · Տերմութիս էր անուն նորա ·

Էր · Բայ ·

Անուն · Ենթակայ պարզ՝ քանզի մէկ բառ է · բայց բազմամասն՝ քանզի ունի յաւելուած Նորա յատկացուցիչը ·

Տերմութիս · Ստորոգելի պարզ եւ լոկ՝ քանզի մէկ բառ է եւ յաւելուած չունի ·

9 · Էր նա քոյր Ահարոնի ·

Էր · Բայ ·

Նա Ենթակայ պարզ եւ լոկ՝ քանզի մէկ բառ է եւ յաւելուած չունի ·

Քոյր · Ստորոգելի պարզ՝ քանզի մէկ բառ է · բայց բազմամասն՝ քանզի ունի յաւելուած Ահարոնի յատկացուցիչը ·

10 · Զոր պաշտէր (էր պաշտօղ) 'ի կենաց մե-
հենին նուիրելոյ նմա 'ի Թագաւորաց
Եգիպտացւոց յանտառի անդ ·

[illegible] · Բայ ·

[illegible] · Ենթակայ պարզ եւ լոկ՝ քանզի մէկ բառ է եւ յաւելուած չունի ·

[illegible] · Ստորոգելի պարզ՝ քանզի մէկ բառ է · բայց բաղմամասն՝ քանզի յաւելուածներ ունի , այսինքն՝ [illegible] սեռի խնդիրը · եւ [illegible] նախադրութեամբ խնդիր մը որ է՝ 'ի [illegible] [illegible] [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible] [illegible] խօսքը , որ տեղւոյ պարագան , այսինքն՝ [illegible] պաշտելը կը ցուցունէ ·

11 · Մատեանն էր քաղուածոյ երգոց յօրի-
նելոյ 'ի պատիւ դիցն այնորիկ ·

[illegible] · Բայ ·

[illegible] · Ենթակայ պարզ՝ քանզի մէկ բառ է բայց բաղմամասն՝ քանզի ունի յաւելուած՝ [illegible] 'ի [illegible] [illegible] խօսքը որ տեղւոյ պարագան , այսինքն մատեանն [illegible] ունենալը կը ցուցունէ ·

[illegible] · Ստորոգելի պարզ՝ քանզի մէկ բառ է , եւ բաղմամասն՝ քանզի ունի յաւելուած [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible] խօսքը ·

12 · Զոր 'ի ձեռին ունէր (էր ունող) ·

[illegible] · Բայ ·

[illegible] · Ենթակայ լռելեայն , պարզ եւ լոկ՝

քանզի մէկ բառ է եւ յաւելուած չունի ·

Նոյն · Ստորոգելի պարզ՝ քանզի մէկ բառ է, բայց բազմամասն՝ քանզի ունի յաւելուած զոր սեռի խնդիրը, եւ ՚ի յետ-ին նախադրութեամբ խնդիրը որ տեղւոյ պարագան, այսինքն՝ ուր ունենալը կը ցուցունէ ·

## Զ․ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԵԱՆՑ ԲՆՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԻՐԱՐՈՒ ՀԵՏ ՈՒՆԵՑԱԾ ԿԱՊԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՑՈՒՑՆԵԼ

Խօսքի մը մէջ Նախադասութեանց բնութիւնն ու իրարու հետ ունեցած կապակցութիւնը յայտնելու համար՝ տղաք սա երեք բանն ընելու են ։

Նախ՝ խօսքին մէջ պարբերութիւնները որոշել, և իւրաքանչիւր պարբերութեան անդամներն իրարմէ զատել, և եթէ պարբերութեան մէկ անդամը բաղադրեալ է, այսինքն՝ երկու կամ աւելի մաս ունի, անոնք ալ զատել * ։

Երկրորդ՝ Պարբերութիւններն ու անոնց անդամները զատելէն ետքը՝ տղաք

* Մենք հետեւեալ օրինակին մէջ պարբերութեանց անդամները սա | նշանով կը զատենք․ իսկ պարբերութեան բաղադրեալ անդամներուն մասերը՝ սա | նշանով ·

պարբերութեան անդամներուն իրարու հետ ի՛նչ յարաբերութիւ՛ն ունենալը բացատրելու են. այսինքն թէ՝ մէկը միւսէ՛ն կախում է, թէ անոր հակադրութիւնը, և կամ պատճառը կամ ձեւը. Դարձեալ՝ ըսելու են թէ իւրաքանչիւր անդամ պարզ է թէ բաղադրեալ, և եթէ բաղադրեալ է՝ երկրորդման առաջին մասին հետ ի՛նչ յարաբերութիւ՛ն ունի:

Երրորդ՝ խօսքի մը պարբերութիւնները զատելէ՛ն և լուծելէ՛ն ետքը. տղաք ամբողջ խօսքին իմաստը համառօտելու են:

ՕՐԻՆԱԿ ԵԶՆԻԿԷՆ

1. Բարւոք է արհեստին եւ գեղեցիկ բնութեամբ, եւ մեզ եւ ամենայն արարածոց որ 'ի ներքոյ երկնից յօդուած (է) եւ 'ի դարման, իբրեւ ճրագ մի 'ի մեծի տան 'ի մէջ ձեղուան եւ յատակի լուցեալ՝ առ 'ի զխաւարն եւ զստուեր զերկուց մեծացն անօթոց 'ի բաց 'ի միջոյ փարատելոյ. || Բայց ինքն եթէ իցէ եւ եթէ չիցէ՝ զայն ոչ գիտէ. | Զի չէ 'ի բանաւորաց եւ 'ի մտաւորաց:

2. Նոյնպէս եւ այլքն յանշնչից արարածոց, թէ՛ ջուր թէ՛ հուր թէ՛ երկիր թէ՛ օդ, թէ իցեն եւ թէ չիցեն՝ զայն ոչ գիտեն. || Եւ (այլ) զսպասաւորութիւնն յոր կարգեցան՝ անդադար մատուցանեն վարելով այնր որ կարգեացն զնոսա:

3. Եւ մեք ոչ անարգեմք զնոսա եւ ոչ պաշ-

տօն մատուցանեմք նոցա. || այլ հայեցեալ ընդ նոսա՝ փառաւորեմք զկարգիչն նոցա եւ զյօրինիչ. | զի մեզ 'ի պէտս են, եւ կարգչին իւրեանց 'ի փառս.

Դ. Զխորգ պաշտիցեմք զարեգակն որ մերթ կոչի իբրեւ զծառայ՝ առ 'ի սպասն յոր կարգեցաւ՝ հասանելոյ. եւ մերթ երթայ զօղէ իբրեւ զարհուրեալ, եւ տայ անցն խաւարին ընուլ զմիջոց 'ի մեծի աւուր, եւ ընդ ժամանակս ժամանակս 'ի խաւար զառնալ առ 'ի յանդիմանութիւն եւ յամօթ իւրոցն պաշտօնէից՝ յայտ արարեալ եթէ Զեմ ես արժանի պաշտաման, այլ այն՝ որ զիս եւ զամենայն այս լուսաւոր պահէ, եւ զցայգ զօղեցուցանէ. Կամ (զխորգ պաշտիցեմք) զլուսին որ ամսոյ ամսոյ հիւծանի, զրեթէ եւ մեռանի եւ ապա սկիզբն առնու կենդանանալոյ զի քեզ զյաւութեան օրինակն նկարիցէ. Կամ՝ զօդ որ մերթ զօչիցէ վարադացեալ՝ հրամանաւ, եւ մերթ սարսէ 'ի զօչելոյն՝ սաստիւ. եւ կամ՝ զհուր որում եւ զքեզ իսկ երկրորդ արարիչ կարգեաց յօրինիչն, զի յորժամ կամիցիս՝ վառիցես, եւ յորժամ կամիցիս՝ խափանեսցես. կամ՝ զերկիր զոր հանապազ բրեմք եւ ցանկ կոխեմք, եւ զաղբս՝ զմեր եւ զանասնոց մերոց՝ 'ի նա հեղումք. կամ՝ զջուր զոր հանապազն ըմպեմք, եւ զանուշահոտութիւն նոցա 'ի ժամանահասութիւն 'ի փորի մերում զարձուցանեմք, եւ զնեխքին եւ զարտաքին աղտեղութիւնս մեր նոքօք սրբեմք. || Եւ այսու ամենայնիւ յայտ է թէ զոր առ աստուածս ունին՝ անարգեն չարք եւ անպատուեն.

Ե. Նա եւ զօղումն եւ սոսկումն ունի զա-

բարանս , | յորժամ զպատիւ արարչին ոք նորա մատուցանիցէ ․ || եւ յայտ առնէ երկիր չարժելովքն , եւ օդքն դժդմելովն եւ քամմնելով , եւ ծով սաստկութեամբ ալեացն սպառնալեօք ։

6 ․ Եթէ ոչ սաստ արարչին նահանջէր զնոսա , | մի մի ՚ի նոցանէ բաւական էր զամենայն սասանել՝ առ ՚ի խնդրելոյ զվրէժ համարակաց արարչին ․ կամ ծով ծածկելով , որ ակար ուսպումն պաշարեալ՝ չիշխէ անցանել ըստ հրաման , կամ երկիր՝ կլանելով , որ ՚ի վերայ ոչնչի կայ հաստատեալ , եւ յոչինչ դառնալ եւ դարձուցանել չէ պատրաստ զիւր բնակիչսն ․ կամ հողմ՝ պարտասեցուցանելով , որ կենդանութիւնն է ամենայն շնչաւորաց , եւ չիշխէ արգելուլ զկենդանութիւնն ստանցս հրամանի կենդանատուհին ․ կամ օդք՝ երբեմն զատառմանիան չնչելով , եւ երբեմն զխարշակն բերելով , եւ լինէր ամենայն ինչ ոչինչ ։ || Այլ նա ուռնիկ իւրեւ զկառուցին լծեալ ՚ի չորից երիւարաց զաշխարհս տեսանեմք ․ ՚ի ջերմութենէ , ՚ի ցրտութենէ , ՚ի ցամաքութենէ եւ ՚ի խոնաւութենէ ․ եւ զօրութիւն իւն ծածուկ՝ կառավար , որ զչորս կազեցոյն ընդ միմեանս ՚ի հաշտութեան եւ ՚ի հաւանութեան պահեալ նըուաճէ ։

7 ․ Ամենայն կառք ՚ի համազգեաց երիւարաց լծին , || բայց միայն յայնց կառաց որ ՚ի չհամազգեաց լծեալ են ։

8 ․ Եւ որ ՚ի համազգեացն լծեալ են՝ երբեմն այլթաքեն , երբեմն օձանեն , եւ ՚ի սարդնարդի բդ կառավարին եւ զանձրեւ կայցուցանեն , եւ երբեմն խորտակումն իսկ կառացն գործեն ․ եւ յորժամ

ողջ կառքն իցեն եւ ողջ կառավարն եւ վարժ երիվարքն, ոչ եղեալ 'ի հանդէպ երեսացն եւեթ արշաւին. || Եւ (այլ) այս կառք զարմանալիք 'ի հակառակ եւ յաննման երիւարաց լծեալ եւ ծածուկ ձեռամբ ուղղեալք՝ ոչ 'ի մի միայն կողմըն, 'ի հանդէպ երեսացն եւ եթ արշաւին, | այլ յամենայն կողմանս՝ վարգին, եւ ընդհանուր արշաւին, եւ ընդ ընաւս սլանան, եւ ամենայնի բաւական են.

9. Յորժամ ընդ արեւելս ընթանան (այս կառք), չէ ինչ արգել թէ ընդ արեւմուտս ոչ արշաւիցեն. եւ յորժամ ընդ հիւսիսի վարգին, չէ ինչ արգել թէ ընդ հարաւ ոչ սուրայցեն. || զի ձեռն կառավարին բաւական է յամենայն կողմանս գիմեցուցանել, եւ ընդ չորս անկիւնս տիեզերաց արշաւեցուցանել.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

1. Արեգակն 'ի բնէ բարի եւ գեղեցիկ է, մեզի եւ երկնից տակ գտնուող բոլոր արարածոց ալ օգուտ եւ զարմանք է՝ մեծ տան մը մէջ ձեղուան ու յատակին մէջտեղ վառուած ճրագի մը պէս, երկու մեծ անօթներուն (երկնից եւ երկրի) մէջէն խաւարն ու ստուերը փարատելու համար, | բայց ինք չի գիտեր թէ կա՞յ կամ չկայ, | քանզի բանաւոր եւ մտաւոր չէ.

2. Նոյնպէս ուրիշ անշունչ արարածներ, (զոր օրինակ) ջուրը, հուրը, երկիրը եւ օդը, կա՞ն թէ չկան՝ չեն գիտեր. || բայց ինչ ծառայութեան համար որ կարգուած են՝ անդադար կը

կատարեն գիրենք կազմողին առաջնորդութեամբը։

3․ Մենք զանոնք չենք անարգեր. ոչ ալ կը պաշտենք. Այլ անոնց նայելով զանոնք կարգողն ու յօրինողը կը փառաւորենք, վասն զի մեզի պիտանի, իրենց արարչին ալ փառք են։

4․ Ի՞նչպէս պաշտենք արեգակը որ մերթ ծառայի մը պէս կը կանչուի որպէս զի իրեն որոշեալ ծառայութիւնը կատարէ, եւ մերթ տեղի կուտայ խաւարին որ այս մեծ տանս (երկրի ու երկնից) միջոցը լեցնէ. երբեմն երբեմն ալ կը խաւարի զինք պաշտողները յանդիմանելու եւ ամչցնելու համար՝ իմացնել ուզելով թէ Ես արժանի չեմ պաշտուելու, այլ ան՝ որ զիս ցորեկները լուսաւոր կը պահէ, գիշերները ալ կը ծածկէ, երբեմն ալ կը խաւարեցնէ։ Կամ (ի՞նչպէս պաշտենք) լուսինը որ ամէն ամիս կը հիւծի եւ գրեթէ կը մեռնի ու յետոյ կը սկսի կենդանանալ որպէս զի քեզի յարութեան օրինակը նկարէ. կամ՝ օդը որ մերթ կը վարազանայ (կը կատղի վարազի նման) հրամանաւ Աստուծոյ, եւ մերթ սարսափած կը լռէ Աստուծոյ սաստելովը. եւ կամ՝ կրակը որուն առեղծողը զքեզ իբրեւ երկրորդ արարիչ ըրաւ որ երբ որ ուզես՝ վառես, եւ երբ որ ուզես՝ մարես. կամ՝ երկիրը զոր միշտ կը բրենք ու կը կոխենք, եւ մեր ու մեր անասնոց աղբը հոն կը թափենք. կամ ջուրը զոր միշտ կը խմենք, եւ որուն անուշութիւնը մեր փորին մէջ գարշահոտութեան կը դարձունենք, մեր ներսի եւ դուրսի աղտեղութիւններն ալ անով կը մաքրենք։ Աւելի յայտնի է որ շատերն իրենց աստուծոյ տեղ դրած բաները կ՚անարգեն եւ անպատիւ կ՚ընեն։

5. Արարածներն ալ կը գողան, | երբ մարդիկ արարչին պատիւն անոնց կը մատուցանեն. | Եւ ատիկա յայտնի կ'ընէ երկիր՝ շարժելով, լուսաւորները՝ խաւարելով, օդը՝ գժգմելով եւ քամիներով, ծովն ալ իր ալիքներովը սպառնալիք ընելով։

6. Եթէ արարչին սաստը զանոնք (արարածները) եւ չբռնէր, | անոնց ամէն մէկը բաւական էր ամէն բան կորսնցնելու՝ իրենց արարչին վրէժը խնդրելու համար. կամ ծովը՝ (երկիրս) ծածկելով, այն որ տկար աւազով պաշարուած՝ իրեն տրուած հրամանը չի կրնար անցնիլ. կամ երկիր (զմարդիկ) կլանելով, այն որ ոչընչի վրայ հաստատուած է եւ չի կրնար ոչինչ դառնալ եւ կամ իւր բնակիչները ոչինչ դարձնել. կամ հողը չնչապատ ընելով, այն որ բոլոր շնչաւորաց կենդանութիւնն է, եւ առանց հրամանի կենդանապահին (Աստուծոյ) չի կրնար կենդանութիւնն արգելուլ. կամ օդը՝ երբեմն ցուրտ փչելով եւ երբեմն խորշակ բերելով. եւ այսպէս ամէն բան ոչինչ կ'ըլլար։ | Այլ ընդհակառակն կը տեսնենք աշխարհս իբրեւ կառք մը չորս ձիերէ լծեալ, այսինքն՝ ջերմութենէ, ցրտութենէ, ցամքութենէ եւ խոնաւութենէ, եւ ծածուկ զօրութիւն մը իբրեւ կառավար՝ որ այն չորս կռուողները հաշտութեան եւ միաբանութեան մէջ կը պահէ։

7. Ամէն կառք նոյնասեռ ձիերէ կը լծուի. | միայն այս կառքն է որ այլասեռ երիվարներէ լծուած է։

8. Նոյնասեռ ձիերէ լծուած կառքեր երբեմն կը գթեն, երբեմն ճամբէն դուրս կ'ելլեն, եւ կառավարն ու զիրենք վտանգի մէջ կը դնեն. երբե-

մէն նաև կառքը կը խորտակին . և երբ կառքը ողջ է , կառավարն առողջ , ձիերն ալ վարժ , դէպ առաջ կը վազեն ։ Բայց այս զարմանալի կառքը որ հակառակ և աննման երիվարներէ լծուած է՝ ծածուկ ձեռամբ ուղղուելով , ոչ թէ միայն մէկ կողմ , այսինքն՝ դէպ յառաջ միայն կը վազէ , այլ ամէն կողմ կ՚ընթանայ , ամէն դի կը վազէ , ամէն կողմ կը սլանայ , և աս ամէնն ընելու կարող է .

9 . Երբ ( այս կառքը ) արևելից կողմը կը վազէ , արգելուած չէ արևմտից կողմն ալ վազելու . և երբ հիւսիսային կողմը կ՚ընթանայ , արգելուած չէ նաև դէպ 'ի հարաւ ընթանալու , վասն զի կառավարին ( Աստուծոյ ) ձեռքը բաւական է զայն ամէն կողմ դիմեցնել և անեզերաց չորս անկիւնը վազցնել .

ԼՈՒԾՈՒՄ

Այս օրինակին մէջ 9 գլխաւոր պարբերութիւն կայ ։

Առաջին պարբերութեան մէջ՝ երկրորդ անդամը առաջնոյն հակադրեալն է , և բաղադրեալ է , այսինքն՝ երկու մաս ունի . երկրորդ մասն առաջին մասին պատճառը կամ փաստն է ։

Երկրորդ պարբերութեան մէջ՝ երկրորդ անդամը նոյնպէս առաջնոյն հակադրեալ է . երկու անդամն ալ պարզ են .

Երրորդ պարբերութեան մէջ՝ դարձ-

եալ պարբերութեան երկրորդ անդամն առաջնոյն հակադրեալ է, և բաղադրեալ է, այսինքն՝ երկու մաս ունի. երկրորդ մասն առաջին մասին պատճառը կամ փաստըն է ։

Չորրորդ պարբերութեան մէջ՝ պարբերութեան երկրորդ անդամն առաջնոյն հետեւութիւնն է, այսինքն՝ առաջին անդամը որ շատ մը և-ն շաղկապով կապուած նոյնատեսակ իմաստներէ կը բաղկանայ՝ երկրորդ անդամին պատճառը կամ փաստն է ։

Հինգերորդ պարբերութեան մէջ՝ երկրորդ անդամն առաջնոյն պատճառը կամ փաստն է. առաջին անդամը բաղադրեալ է, այսինքն՝ երկու մաս ունի. երկրորդ մասը՝ զի-ն շաղկապով առջինէն կախում կը ցուցնէ ։

Վեցերորդ պարբերութեան մէջ՝ երկրորդ անդամն առաջնոյն հակադրեալ է. առաջին անդամը բաղադրեալ է, այսինքն՝ երկու մաս ունի, առաջին մասը ԵԹԷ շաղկապով երկրորդէն կախում կը ցուցնէ ։

Եօթներորդ պարբերութեան մէջ՝ երկրորդ անդամն առաջնոյն հակադրեալ է. երկուքն ալ պարզ են ։

Ութերորդ պարբերութեան մէջ՝ երկրորդ անդամը նոյնպէս առաջնոյն հակադր-

եալ է ։— շաղկապով որ այլ շաղկապի զօրութիւն ունի ։ Երկրորդ անդամը բացատրեալ է , այսինքն՝ երկու մաս ունի . երկրորդ մասը առաջին մասին հակադրեալ է ։

Իններորդ պարբերութեան մէջ՝ երկրորդ անդամն առաջնոյն պատճառը կամ փաստն է . երկուքն ալ պարզ են ։

Այս 9 պարբերութեանց մէջ Նշէնք կ՚ընդունինք հետեւեալ իմաստը կամ եզրակացութիւնը .

Ա․ր–ր–ծ–ները դէ–– է դ–ըէլ։

Պատճառաբանութիւնը սա է .

Աստուած միայն պաշտելի է , վասն զի իմաստութեամբ ստեղծեց ամէն բան , և զանոնք կը կառավարէ .

Արդ արարածները , թէպէտ բարի և գեղեցիկ են , բայց ստեղծուած են մեր պիտոյից և ուրիշ այլեայլ ծառայութեանց-ներուս կամ նպատակներու համար , կուրէն կատարելով իրենց պաշտօնը՝ առանց գիտնալու թէ կան կամ չկան , քանզի բանականութիւն չունին .

Ապա զանոնք պէտք չէ պաշտել ։

Այս իմաստը կ՚ընդունի կամ կը բացատրէ քանի մը փաստերով ։ Նախ . Արեգակը , Ջուրը , օդը , և ուրիշ արարածներ բարի , գեղեցիկ և օգտակար են , բայց

բանականութիւն չունենալով՝ իրենց գոյութիւնն անգամ չեն ճանչնար . ապա Աստուած չեն . փասն որոյ մենք ալ զանոնք չենք պաշտեր .

Երկրորդ . արարածները . զոր օրինակ՝ արեւը . լուսինը . օդը . և այլք . յատուկ պաշտօններ ունին որոնք ծառայի պէս անդրէպ կը կատարեն . դարձեալ տկար և պակասաւոր են . ինչպէս՝ արեգակը կը խաւարի . լուսինը կը հիւծի . կը մաշի . կը-րակը և ջուրն ալ մենք մեր ուզածին պէս . երբեմն նաև անարգ նպատակներու . կը գործածենք . ասոնք այսպէս ըլլալով զանոնք ինչպէս կրնանք պաշտել .

Երրորդ . նոյն իսկ արարածները պաշտողի չեն ուզեր . և կարծես թէ կը դժկամակին երբ անոնց պաշտօն կը մատուցուի . և ասիկա գրէ թէ յայտնի կ՚ընեն . երկիրը շարժելով . լուսաւորները խաւարելով . և այլն . այնպէս որ եթէ Աստուծոյ [illegible] չըլլար . ամեն մէկը կրնար կերպով մը Աստուծոյ եղած անարգանաց վրէժն առնել . ծովը ծածկելով . երկիրը կլանելով . և այլն . ապա պէտք չէ զանոնք պաշտել :

Չորրորդ . կը տեսնենք որ աշխարհիս մէջ երևելի զօրութիւններ . ինչպէս՝ ջերմութիւնը . ցրտութիւնը . խոնաւութիւնը և ցամքութիւնը . որոնք իրարու հա-

կառակ զօրութիւններ են . չորս այլ-այլ գազաններէ լծուած կառքի մը նման , միաբանութեամբ յառաջ կ'երթան առանց իրարու հակառակելու կամ իրար ոչնչացնելու . այնպէս որ յայտնի կը տեսնուի թէ ծածուկ ձեռք մը կայ որ զանոնք կ'ուղղէ և կը կառավարէ . ապա պէտք չէ զանոնք պաշտել , այլ ան որ անոնց ուղղիչը և վարիչն է :

Աս կերպ լուծելը ոչ միայն տրամաբանական , այլ և տեսակ մը ճարտասանական կրթութիւն է , և տղոց շատ օգտակար է : Անով տղոց դատողութիւնը կը կրթուի և պատճառաբանել , այսինքն՝ իմաստ մը կամ եզրակացութիւն մը փաստերով լուսաւորել և ընդլայնել կը սորվին : Բայց յայտնի է որ աս վերջին տեսակ տրամաբանական կամ իմաստի լուծումն ընելու կարող կրնան ըլլալ այն տղաք որոնք արդէն յառաջադէմ են , ուստի և վարժապետը կրնան այսպիսի աշակերտներ աս տեսակ լուծման մէջ կրթել , թէ հայ և թէ օտար (զոր օրինակ Գաղիացի) հեղինակաց մէջէն հատուածներ տալով անոնց , որ այս կերպով լուծեն և անոնց փաստաբանութեան կերպը երևան հանեն . անոնց իմաստը վերը ցուցուած կերպով համառօտելով :